№ 4 (95) IX ՏԱՐԻ 30 ԱՊՐԻԼ 1899

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak,,
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

„Դրօշակ"-ի խմբագրութիւնը մարտ 27 թուակիր գրութեամբ մը դիմած էր եւրոպացի քանի մը յայտնի և հեղինակաւոր անձերու, խնդրելով անոնցմէ որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական խնդիրը քաղաքականութեան օրակարգն անցնելու, օգտուելով զինադադարութեան խորհրդաժողովին մօտալուտ գումարումէն։

Այդ առթիւ խմբագրութեան ստացած պատասխաններէն նախորդ թուին մէջ հրատարակած ենք Ռիչլիսթի Գարիբալդիի և Ամիլկար Չիպրիանիի նամակները. այս անգամ ալ „Դրօշակ"-ի ընթերցողներուն կը հաղորդենք պր. Ժորժ Ֆավոնի մեզ ուղղած գրութիւնը։

Պր. Ժ. Ֆավոն, որ տնօրէն խմբագրապետն է „Le Genevois" թերթին, երեսփոխան զուիցերական Ազգային Ժողովին, նախարար հանրային կրթութեան Ժընէվի հանրապետութեան և պետը Ժընէվի կանտոնի արմատական կուսակցութեան, — Զուիցերիոյ հանրային գործիչներուն ամէնէն խոշոր դէմքերէն մէկն է։ Իր կորովի գրիչը և մանաւանդ հռետորի առաջնակարգ տաղանդը միշտ գործ դրած է պաշտպանելու արդարութեան և մարդկայնութեան սկզբունքները այն բոլոր առիթներուն մէջ, որ ներկայացած է օրագրողի և հանրային գործչի իր երկար ու բեղուն ասպարէզին վրայ։

GENÈVE, 7 *Mai 1899.*

A la Rédaction du *Droschak*,

Messieurs,

Depuis 20 ans vous subissez toutes les horreurs de la plus sanglante persécution ; on vous tue, on vous pille, on viole vos femmes et vos filles. L'Europe ou plutôt la diplomatie européenne, qui poursuit des intérêts dynastiques, vous a lâchement abandonnés ; je ne vois rien qui puisse vous engager à compter sur elle aujourd'hui plus qu'hier. Votre défense est en vous seuls ; ce n'est que par l'énergie de votre protestation et de votre résistance que vous finirez par grouper autour de vous assez d'indignations d'hommes libres pour faire enfin une révolte efficace de l'opinion publique contre vos bourreaux.

Si l'heure de la justice se fait attendre vous aurez au moins, par votre attitude courageuse, montré que vous êtes dignes des réparations futures, et vous aurez rendu aux opprimés, qui l'attendent partout, le service d'avoir ajouté une page glorieuse au redoutable dossier qui se forme contre les oppresseurs.

Comptez sur mes sympathies profondes, malheureusement impuissantes.

Votre

G. FAVON.

ԺԸՆԷՎ, 7 *մայիս* 1899

„Դրօշակ"-ի խմբագրութեան

*Պարոնե՛ր,*

Քսան տարի է դուք ամէնէն արիւնռուչտ հալածանքի բոլոր սարսափները կը կրէք. ձեզ կը սպաննեն, ձեզ կը թալանեն, ձեր կիներն ու աղջիկները կը բռնապղծեն։ Եւրոպան կամ աւելի եւրոպական դիւանագիտութիւնը, որ արքատոհմային շահերը առաջ կը քշէ, վատօրէն ձեզ երեսի վրայ ձգեց. բան մը չեմ տեսներ որ դրդէ ձեզ երեկուընէ աւելի՝ այսօր անոր վրայ յոյս դնել։ Դուք էք ձեր միակ պաշտպանները. ձեր բողոքի կորովովը եւ ձեր դիմադրութիւնովը միայն պիտի կրնաք վերջապէս շուրջերնիդ արծաթել ազատ մարդերու բաւականաչափ զայրոյթ մը, ձեր դահիճներուն դէմ հանրային կարծիքի արդիւնաւոր ընդվզում մը առաջ բերելու համար։

Եթէ արդարութեան ժամը ուշը կը մնայ, գոնէ, ձեր արիական ընթացքով, ցոյց ված պիտի ըլլաք թէ արժանի էք ապագայ գոհացումներու եւ բարեկամական ծառայութիւնը մատուցած պիտի ըլլաք հաստահարուածներուն — որոնք ամէն կողմէ կը սպասեն անոր, — փառապանծ էջ մը աւելցնելով դատաստանագրքերու այն զարհուրելի կապոցին վրայ, որ բռնաւորներուն դէմ կը կազմի։

Վստահ եղիք իմ խորին համակրութիւններուս վրայ, որոնք դժբախտաբար անզօր են։

Ձերդ

Ժ. ՖԱՎՕՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱՄԱ ԹԻ՞ ՓԱՐՍ

## I

Գեղեցիկ է անունը, — Խաղաղութեան ժողով։ Եւ Հոլանդիայի Համեստ քաղաքը, իբրև թատերաբեմ, գուցէ իրաւունք ունի պարծենալու, որ մեր արիւնոտ և կուսմոլ դարում իր անուան հետ է կապում այդպիսի մի ժողով...

Ցոգնած պատերազմներից, ջարդուած հրացանի և թնդանօթի ծանրութեան տակ, ուժասպառ աւերիչ տուրքերից, որ յանուն խաղաղութեան և ապահովութեան վճարում է զօրանոցներին և զինուորականութեան — յուսադրուած, վերջապէս, այն եզակի դէպքից, որ զինաթափութեան հրաւէրը այս անգամ բխում է ոչ թէ իդէալիստ մտածողի կամ յափշտակուած գրողի համեստ սենեակից, այլ բռնապետութեան ներկայացուցիչների գահերի բարձրութիւնից, — այսօր աշխարհիս խաղաղասէր տարրերը սպասում են մեծադղորդ ժողովի բացման և մանաւանդ նրա վախճանին։

Ի՞նչ կը լինի այդ վախճանը. — սրտայոյզ, յեղափոխիչ, ցնցող մի դրամա, թէ խեղկատակ և անարդ մի ֆարս...

## II

Ժամանակակից տնտեսական-քաղաքական կեանքում խաղաղութեան գործին վտանգ սպառնացող խնդիրներից մէկը անշուշտ փոքրիկ ազգերի անկախութեան խնդիրն է։ Ծնունդ առնելով դեռ 18-րդ դարի վերջերից և գոյութիւն ունենալով, իբրև օրուայ հարց, մի ամբողջ դար, — ստրուկ ազգերի ազատագրական շարժումը կատարեալ իրաւունք ունի վերջնական լուծում ստանալու այժմ, իբրև շատ պարզ և հասուն մի խնդիր։

Լա Հէի ժողովից չի պահանջւում ուրեմն գլուխ կոտրել և հարցեր ստեղծել։ Կեանքը ինքն արդէն ստեղծել և հրապարակ է բերել այդ հարցերը։ Հարկաւոր է միայն չփակել դռները, ինչպէս այդ փորձում են արդէն մի քանի կառավարութիւնների ներկայացուցիչները, և ոչ էլ խցկել ականջները, ինչպէս արդէն պատրաստւում են անել դիւանագիտութեան մեծանուն անդամները։ Տանջւող և նահատակ ազգերը — այդ գիտենք արդէն հեռագիրներից — ուղերձներ են պատրաստում և պատգամաւորութիւններ են կազմում խնդրելու Խաղաղութեան ժողովից՝ բաւական համարել իրենց թափած արիւնը, տւած զոհերը, կրած տանջանքները։

„Մենք ձեզանից ոչինչ չենք պահանջում, ասում են նրանք — մի իրաւունք միայն ճանաչեցէք մեր վերաբերմամբ — իրաւունք ապրել մեր հայրենիքում, սիրել և կուռել նրա առաջդիմութեան համար այնպէս, ինչպէս դուք սիրեցիք և կուռեցիք ձերիններին համար..."

Եւ եթէ այդ անհրաժեշտ և արդար պահանջը, որ այժմ արտայայտւում է խնդիրքի ձևով, այս անգամ էլ բաւարարութիւն չստանայ, թող չգանգատւեն զինաթափութեան ժողովները, որ շատ չանցած, ստիպւած կը լինեն նորից զէնք վերցնել, նորից զինաւորւել...

## III

Զինաթափութիւնը զէնքերը զօրանոցներում փակելու մէջ չէ։ Քանի գոյութիւն ունի վտանգը, ամէն մարդ, ամէն ազգ իրաւունք ունի զինւելու։ Ահա այդ վտանգը առաջ բերող պայմաններն են, որոնք պէտք է վերացւեն մէջտեղից և որոնցից մէկն է շղթայակապ ազգերի դրութիւնը այսօր։ Եւ եթէ մի համաժողով, մի միապետ կամ մի պետութիւն ենթադրում է, թէ կարելի է խեղդել, մեռցնել որևէ մէկին այդ ազգերից — նա սխալւում է չարաչար։ Երեք տարուց յետոյ, մենք ոտք կը դնենք մի նոր դարու շէմքի վրայ, — մի դար, որ բերում է մեզ սոցիալական վիթխարի խնդիրներ, — խնդիրներ, որոնց շրջանում կատարեալ անաքրօնիզմ պիտի երևայ ամէն մի հալածանք և բռնութիւն ո՛րևէ ազգի, լեզուի, կամ կրօնի դէմ։ Եւ ահա այդ երևոյթը, միացած ստրկութեան մէջ մնացած ազգերի վրէժխնդրութեան տասնապատկւած զգացմունքի հետ՝ բնականաբար աչնպիսի կերպարանք կը տայ ազգերի ապստամբութեան գործին, որին չի դիմանայ ո՛չ մի զինաթափութեան դաշնագիր, ո՛չ մի վեհաժողովի վճիռ։ Կան պատմական անհերքելի փաստեր։ Կրօնական հալածանքը սովորական էր միջին դարերում, բայց նա անաքրօնիզմ է այժմ։ Ազգայնական հալածանքը, որ տանելի է ներկայ դարում, իբրև մի նոր անաքրօնիզմ գոյութիւն չպիտի ունենայ ապագայում, — դա հայրենասէրների իղձ չէ, այլ էվոլիւցիայի անխախտ օրէնք...

## IV

Խաղաղութեան ժողովը այս և ուրիշ տեսակ հարցերի դէմ մի բան միայն ունի ասելու, — այն է, որ նա զինաթափութեան վերաբերեալ խնդիրներից դուրս՝ պիտի կազմակերպէ միջազգային դատարան այն բոլոր հարցերի համար, որոնք կարող են սպառնալ խաղաղութեան։ Բայց արդե՞օք այդ դատարանը կարող կը լինի ազգերի իրաւունքը անկախ և արդար պաշտպանել։ Արդե՞օք միջազգային դատարանը այնպէս կը լինի կազմւած, որ նրա առաջ խտրութիւն չլինի, օրինակ՝ թոյլ լեհի և հզօր ռուսի կամ գերմանացու, հպատակ իրլանդացու և տիրող անգլիացու համար։ Արդե՞օք այդ դատարանը արդարութեան տեսակէտով պիտի չափի իւրաքանչիւր ազգութեան պահանջը և եթէ արդարութիւնը թոյլի, անզէնի կողմն է՝ հնարաւորութիւն պիտի ունենայ ստիպել ուժեղին և զինւածին յարգել թոյլի և անզէնի իրաւունքները։

Եթէ „միջազգային դատարանը" պիտի յենւի „միջազգային իրաւունք" կոչւած գիտութեան վրայ — այն

դիտութեան, որ հիմնական խտրութիւն է դնում քաղաքականապէս անկախ և հպատակ ազգերի իրաւունքների որոշման մէջ — այն գիտութեան վրայ, որ միմիայն տէրութիւն կազմող ազգութիւններին է իրաւունք տալիս՝ 1) ինքնապաշտպանութեան, 2) որոշ երկիր ունենալու, 3) ներքին գործերում անկախ լինելու, 4) յարգանք ու պատիւ վայելելու, 5) միջազգային յարաբերութիւնների մէջ մտնելու և 6) սեփական շահերը պաշտպանելու, — ապա շատ ազգերի համար կը մնայ՝ խաղաղութիւնը պաշտպանելու համար՝ դիմել միևնոյն միջոցին, ինչ միջոց վաղուց ընտրել է ինքը Եւրոպան։ Համայն աշխարհը խաղաղութիւն է ցանկանում, և յանուն այդ խաղաղութեան՝ ամբողջ կէս դար է Եւրոպան զինւում է ոտքից մինչև գլուխ։ Թողէք ուրեմն, որ ստրուկ ազգերն էլ յանուն նոյն այդ խաղաղութեան, շարունակեն զինուել, և զէնքը ձեռքին ոտքի կանգնեն նրանց դէմ, որոնք դարերից իվեր խլել են իրենցից այդ երջանիկ խաղաղութիւնը...

## V

Ինչ վերաբերում է յատկապէս մեզ, հայերիս, — մենք, որ յուսահատուած Եւրոպայի արդարամտութիւնից, վաղուց արդէն ընտրել ենք կուի ճանապարհը. մենք, որ ոչ մի ժողովրդի չենք կարող խորհուրդ տալ հաւատալու ո՛չ միայն Եւրոպայի դիւանագիտութեանը, այլ և նոյն իսկ նրա „ազատ" համալսարանների ամբիոններից աւանդւող „միջազգային իրաւունքին", — մենք, ասում ենք, բաւականաչափ հիմք ունենք պահանջելու Լա Հէի ժողովից, որ հայկական և մակեդօնական հարցերը ստանան ա՛յդտեղ որոշ լուծում։ Մի շարք ազգայնական ուրիշ խնդիրների և հայկական ու մակեդօնական հարցերի մէջ առնուազն այն զանազանութիւնը կայ, որ վերջինները վաղուց արդէն „միջազգային քաղաքական հարցերի" իրաւունք են ստացել և մօտ կէս դար է արդէն, որ Թիւրքիան զրկուած է այն ներքին անկախութիւնից իր քրիստոնեայ հպատակների վերաբերմամբ, որ պահպանել են ուրիշ պետութիւնները։ Մեր պահանջը ուրեմն հիմնուած է այնպիսի պայմանների վրայ, որոնք համապատասխանում են նոյն իսկ „միջազգային իրաւունք" գիտութեան սկզբունքներին — մի գիտութեան, որ ինչպէս տեսանք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ հզօրների կամքի ու շահերի սրբագործումը միայն։

---

Այո՛, գեղեցիկ է անունը, — Խաղաղութեան ժողով։ Բայց եթէ այդ գեղեցկանուն ժողովից չի կարելի սպասել մի յեղափոխիչ ցնցող դրամա, — ապա, գոհացում տալով հայկական և մակեդօնական պահանջներին, նա գոնէ խուսափած կը լինէր Լա Հէի համաշխարհային բեմի վրայ խեղկատակ, անարգ մի ֆարս խաղալուց.։

# ՋԷՅՄՍ ԲՐԱՅՍ

## „ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ՎԵՐՋԻՆ 20 ՏԱՐՈՒՄ" *)

Հայոց հարցի առթիւ ստեղծուած ահագին գրականութեան մէջ հազուագիւտ են այնպիսի գրուածքներ, որոնք ճշգրիտ լուսաբանութիւն են տալիս Տաճկահայաստանի վերջին աղէտների և ներկայ տխուր իրականութեան։ Ասպարէզ եկող բազմաթիւ „քննադատներից", „պատմաբաններից" շատ քչերն են ջանք տուել իրենց՝ հանգամանքների խորքը թափանցելու և հայկական ողբերգութեան իսկական պատճառները որոնելու։ Սովորաբար հարցի մակերևոյթի վրայ պտոյտ են գալիս, ասելով՝ Հայաստանի անցքերը կրօնական անցքեր են, հայը կոտորւում է, որովհետև քրիստոնեայ է, կամ թէ պատճառաբանում են՝ թէ հայ յեղափոխականները դրդիչ եղան ջարդերի։ Եւ նման բազմաթիւ անհեթեթութիւններ։

Ջէյմս Բրայսի գրուածքը — եթէ մի կողմ թողնենք մի երկու ակներև սխալանքներ, որոնք կարող են լինել միայն չարամիտ գաղտասուքների (insinuation) արդիւնք — միանգամայն կազդուրիչ է մտքերի այսպիսի մի խառնակ վիճակում։ Հայոց ճգնաժամը ներկայանում է այդտեղ, որպէս անխուսափելի ծնունդ որոշ պատճառական շարքերի։ Հայաստանի ջարդերը պէտք էր կատարուէին անհրաժեշտաբար, անկախ յեղափոխական ջարդերից, անկախ մահմեդական կրօնամոլութիւնից. Հեռատես աչքը այդ կարող էր նախատեսել դեռ 70-ական թւերին, երբ հայերի մէջ սկսուել էր ազգային շարժում, երբ հայ ժողովուրդը սթափուելով դարերի ստրկացնող խաւարից, սկսել էր տենչալ մի աւելի բարձր մարդկային կացութեան, երբ վերջապէս հայկական դատը իբրև քաղաքական հարց պաշտօնապէս դրուել էր Եւրոպայի առաջ։

1878-ի անցքերը, ասում է Բրայս, մեծ ազդեցութիւն ունեցան թէ սուլթանի և թէ նրա քրիստոնեայ հպատակների վրայ։ Բօլգարիայի ազատագրութիւնը յոյս ներշնչեց կրթուած հայերի մէջ, որ Եւրոպան իրենց համար ևս կ'անէ նոյնը, ինչ որ արաւ բօլգարների համար։ Այն միտքը՝ որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձգտէին մի ինքնավար Հայաստան ստեղծել Բօլգարիայի օրինակով, և որ հայերին արած այս կամ այն զիջումները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան — այդ միտքը ամենագլխաւոր պատճառն էր, որ մղեց սուլթանին բօլգարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում։

Ընդարձակ մի տեսութեան մէջ քննում է Բրայս հայոց հարցի պատմութիւնը վերջին քսան տարիներում. „թշուառութեան, մարտիրոսութեան, յուսահատութեան, մահուան պայքարի տարինե՛ր..." Եւ քննում է նա երեք տարբեր տեսակէտներից, 1) դիւանագիտութեան, 2) սուլթանական վարչութեան, 3) հայ ազգային շարժման տեսակէտից։ Հայոց հարցի դիւանագիտական վարկեանը շօշափելիս՝ նա անխնայ մտրակում է թէ Լօբանօվների և թէ Լօրդ Բիկօնսֆիլդի մարդասպան քաղաքականութիւնը. Հայկական անվերջ մարտիրոսութիւնը նկարագրելիս՝ նա զայրագին խարազանում է Թիւրք յոռի

*) Der Christliche Orient 1897 N 11, 12.

վարչութիւնը։ Գլադստոնական շանթող լեզուի մէջ քաղաքակրթուած անգլիացու անկեղծ ցասումն է արտայայտուում։ Նրա ջատագովականը հայոց ազգային շարժման, նրա խօսքերը հայ յեղափոխական շարժման անհրաժեշտութեան մասին՝ վկայում են նրա ճիշդ ու լուսաւոր հայեացքը իրականութեան վրայ։ Ամբողջ տեսութեան միջից սև գծով անցնում է ռուս-անգլիական հակամարտութիւնը — հայոց աղէտների մեծագոյն պատճառը։

Գրում է Բրայս, թէ ինչպէս Բերլինի վեհաժողովը Անգլիայի թելադրութեամբ ջնջեց Ս. Ստեփանոյի՝ հայոց օգտին սահմանուած 16-րդ յօդուածը և փոխարինեց 61-րդ յօդուածով։ Խօսում է Կիպրոսի տխուր դաշնագրի մասին, որով բրիտանական կառավարութիւնը ըստանձնեց միանգամայն հովանաւորի պաշտօնը թէ Թիւրքիայի համար ընդդէմ Ռուսիայի և թէ հայերի համար ընդդէմ Թիւրքիայի։ Ի՞նչ ճանապարհով արդեօք — հարցնում է Բրայս — Անգլիան պիտի ապահովէր հայ ժողովրդի կեանքը, գոյքը, պատիւը... 1856-ի Պարիզի դաշնագրի օրից անցած 22 տարուայ փորձը աչքի առաջ էր. սուլթանները անուղղելի են և երբեք ըէֆորմների մասին տուած իրենց խոստումները չեն իրագործում։ Դեռ 1855 թուին, ասում է Բրայս, գեներալ Սըր Ֆ. Ալիլեամ գրում էր, որ հայկական նահանգները ամէն տեսակէտից տառապում են սիստեմական անարդ հարստահարութիւնների տակ, և բնորոշում էր Թիւրք կառավարութիւնը իբրև բռնակալութեան մի այնպիսի մեքենայ, որ իր նմանը չունի ամբողջ աշխարհում։

Բռնութիւնը մնում էր միակ ճանապարհը սուլթանի վրայ ազդելու համար։ Բայց ո՞վ գործ դնէր այն... Ողբերգութիւնը այդտեղից է սկսւում։ Ռուսաստանը ետ քաշուեց, Անգլիան էլ չուզեց սպառնալիք կարդալ իր հովանաւորեալ սուլթանին, մի գուցէ այդպիսով մղէր նրան Ռուսիայի գիրկը։ Նա բաւականացաւ նօտաներով, յիշատակագրերով, բողոքեց շարունակ Հայաստանում կատարուած անհամար ոճրագործութիւնների դէմ, բողոքեց դեսպանների, հիւպատոսների միջոցով։ Դրանով էր նա կերակրում հայերին. դրանով էր հանգստացնում իր խիղճը։ Բայց այդ ճանապարհով նա աւելի էր գրգռում սուլթանին, աւելի էր թշնամացնում նրան հայերի հետ, աւելի էր վատթարացնում վերջիններիս դրութիւնը։ Անգլիան ջանաց սկզբից միւս պետութիւնների ուշադրութիւնը ևս հրաւիրելու Հայաստանի վրայ, և 1883-ին Բիսմարկի ցինիկ պատասխանն առաւ, թէ Գերմանիան ամենևին չի էլ մտածում հայերի մասին։ Ֆիասկո ֆիասկոյի վրայ։ Եւրոպական համաձայնութիւն կազմակերպելու յոյսը իդերև ելաւ։

Գրում է Բրայս, թէ ինչպէս Ալեքսանդր II-ի մահից յետոյ, իր որդու օրով, ռուս կառավարութիւնը բացարձակ թշնամական դիրք բռնեց դէպի հայութիւնը, թէ ինչպէս ռուսացման քաղաքականութեան հետ միասին սկսեցին խստութիւններ ռուսահայերի շարժման դէմ յօգուտ իրենց տաճկահպատակ եղբայրների։ 1884 թուից, ասում է Բրայս, Կ. Պոլսում հասկացան արդէն, որ ռուսաց դեսպանը ոչ մի լուրջ և անկեղծ ջանք չպիտի անէ՝ Թիւրք վարչութեան մէջ որ և է հիմնական բարեփոխում մտցնելու։

Նկարագրելով Թիւրք կառավարութեան այլանդակութիւնները սկսած Համիդ II-ի գահակալութեան օրից և բնորոշելով այդ կառավարութիւնը իբրև „կազմակերպուած մի աւազակութիւն“, Բրայսը անցնում է իր տեսութեան երրորդ մոմենտին՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ։ Նկարագրում է գիւղական հայ ազգաբնակութիւնը, պարզ, նահապետական, խաղաղասէր, տեղ-տեղ (մանաւանդ լեռնոտ վայրերում) քաջասիրտ, բայց ամէն տեղ անզէն։ Ջատագովում է զէյթունցու դիւցազնութիւնը, համեմատելով նրան սև-լեռնցիների հետ, յիշատակում է 1895-96-ի հերոսական ապստամբութիւնը։ Խաղաղ էին հայաստանցիք, ասում է Բրայս, բայց նրանց հաւատարիմ հպատակութեան մասին խօսք չէր կարող լինել, ինքարկէ. չի կարելի պահանջել կալանաւորից, որ նա հաւատարմութեան զգացմունք տածէ դէպի աւազակային խմբի պարագլուխը։

1877-ից սկսւում է խմորումը հայ կրթուած շրջաններում։ Պատերազմը, Բուլգարիայի ազատումը, ռուսաց զօրքի ներկայութիւնը Հայաստանում, Բերլինի վեհաժողովում 61-րդ յօդուածի ներմուծումը, Անգլիայի բացարձակ համակրութիւնը՝ մի հզօր ժամում տուեցին հայերի ազգասիրական տենչերին։ Աշնան 1880-ին, ասում է Բրայս, ես նորից այցելեցի Ներսէս պատրիարքին, „հայ ազգի արժանաւոր առաջնորդին“, տեսնուեցայ նաև շատ ուրիշ ականաւոր հայերի հետ, բոլորն էլ մեծամեծ յոյսեր էին տածում...

Բայց եւրոպական համերգը միշտ կաղեց, հրաժարուելով ճնշողական միջոցներից։ Արդիւլ Համիդ սկսեց այն ժամանակ նախատածուած հարստահարութիւնների մի քաղաքականութիւն, որ հասունանալով՝ դարձաւ ոչնչացման մի սիստէմ։ Նա իրեն սկզբունք ընդունեց մի տաճկի դեռ 10 տարի առաջ արտասանած այս նշանաւոր խօսքերը. „հայկական խնդիրը ոչնչացնելու միակ ճանապարհն է՝ հայերի ջնջումը“։

Եւ սկսուեց կազմակերպուած հալածանքը իր յատուկ օրգաններով՝ տաճիկ ոստիկանութեամբ, քրդական հրոսակներով, համիդիէ հեծելազօրքով. հալածուեց հայ միտքը, մամուլը, դպրոցներն ու սահմանադրութիւնը, հայի կեանքն ու գոյքը։ Սկսուեցին հայերի խմբական բանտարկութիւնները, դժոխային տանջանքները բանտերում ևայլն ևայլն։ Այդ ամէնը՝ մէկ նպատակով — նուազեցնել հայ տարրը իր բնիկ հայրենիքում։

Բարբարոսութիւնը աճում էր ամսէ ամիս, օրէցօր. ըէֆորմների յոյսը մարել էր...

Ահա այն ժամանակ — այստեղ խօսում է Բրայսը հայ յեղափոխական շարժման սկզբնաւորութեան մասին — խուլ, կրաւորական դժգոհութիւնը հայերի մէջ փոխուեց զայրագնութեան։ Արտասահմանում կազմակերպուեցին յեղափոխական կոմիտէներ, որոնք սկսեցին գրգռել ժողովուրդը դէպի ապստամբութիւն։ Յեղափոխական կուսակցութիւնները քարոզում էին, որ Եւրոպայից՝ մանաւանդ Անգլիայից՝ ոչ մի օգնութիւն յուսալու չէ, և որ յեղափոխութիւնը վերջին ապաստանն է հայրենիքի բոլոր բարեկամների համար...

Վաղուց արդէն — գրում է Բրայս — ընդհանուր մի ապստամբութիւն պիտի պայթէր տաճկական ամբողջ կայսրութեան մէջ, որովհետև դա է բնական դարմանը մի այլանդակ ու անբուժելի կառավարութեան դէմ... Հայերը, անտարակոյս — շարունակում նա — ապստամ-

բելու լիակատար բարոյական իրաւունք ունէին. անտամբութիւնը, եթէ հնարաւոր լինէր, արդար բան էր, քանի որ այդ դէպքում նա մի փորձ էր՝ մարդկանց կեանքն ու պատիւը պաշտպանելու։

Բայց ժողովուրդը անպատրաստ էր, անզէն էր. այդ հիման վրայ և Բրայս յանդիմանում է հայ յեղափոխականներին։ „Աջողութիւնը այնքան անյուսալի էր, որ հայերի բոլոր բարեկամները խստիւ դատապարտում էին բռնի ուժի գործադրութիւնը... Համբերութեան քարոզներն ու յորդորները ապարդիւն եղան... 1890-ին Նիւ-Եօրկում ես հրաւիրուած էի հայոց մի մեծ ժողովի մասնակցելու. ես համբերութեան սովորական խորհուրդները տուի նրանց, բայց իմ խորհուրդները ընդունեցին այնպիսի մի եղանակով, որը ցոյց էր տալիս, թէ որ աստիճանի արդէն առաջ էր անցել յեղափոխական տրամադրութիւնը։ Սպանութիւնների, տանջանքների լուրերը, որ ամէն փոստով ստանում էին այդ տարագրեալները իրենց հայրենիքի բարեկամներից, գազան էին դարձնում նրանց, և ով որ Կապոյտ գրքերի մէջ կարդացել է նոյնանման տեղեկութիւններ, չի կարող չհամոզուել, որ այպիսի մի բռնակալութեան դէմ (որպիսին թիւրքականն է) ամէն միջոց արդարացի է...“

Այդպիսով Բրայս մի կողմից յարձակւում է յեղափոխականների վրայ, միւս կողմից արդարացնում է նրանց, քանի որ տաճկական բարբարոսութիւնների և հայկական ճչացող թշւառութեան դիմաց այդ յեղափոխականները ուրիշ կերպ չէին կարող զգալ, մտածել ու վարուել։ Նշանաւոր անգլիացին կարծէք խոստովանել է ուզում, որ յիրաւի կան վայրկեաններ, երբ խոհեմութեան ու համբերութեան քարոզները միանգամայն անտեղի են ու անհեթեթ... Միւս կողմից պէտք է ընդգծենք և այն կէտը՝ որ Բրայսը, թէև անուղղակի, բայց և այնպէս յետ է մղում հայ յեղափոխականներին ուղղուած անմիտ ամբաստանութիւնները, իբր թէ նրանք եղան դրդող և սկզբնապատճառ հայոց ջարդերի և ներկայ ճգնաժամի։

---

## ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Ուշ գիշերին ծովն է խաղաղ
Ջրեր վճիտ ու յստակ,
Ջինջ է երկինք միապաղաղ,
Աստեղազարդ, կապուտակ։

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
Սև ամպերով մռայլուեց,
Քամի բրդաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլուեց։

Կուրծքն ուռած ու փրփրուն,
Ալիքներն ահագին,
Սուգ ու հառաչ, գոռ ու գոչիւն
Թռան ծոցից ծովակին։

—Սիրուն ծովակ, ասա՛ դու մեզ,
Էլ ի՞նչ նորից յուզուեցիր,
Այն ի՞նչ բոթ էր, որ բերեց քեզ
Քամին մոլար, անձանձիր։

Արդեօք ողբեր տու հառաչանք
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մրմո՞ւնջ, մօր հեծեծա՞նք,
Թէ՞ ճիչ անմեղ մանկիկին...

Արիւնապատ մեր ձորերո՞ւմ
Հիւսել է իր մեղեդին,
Թէ՞ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին...

Ա՜խ այդ ցաւոտ սև երգերով
Մեզ քուն ասին մեր մայրեր,
Ու սարսափի զրոյցներով
Խլացրին մեր ճիչերը։

Եւ այնուհետ շատ տարիներ
Նոյն երգերը տխրագին
Սև դարձրին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին...

Մի անգամ էլ մեր լեռներում
Մի հողմ փչեց ահաւոր,
Էլ արտասուք նա չէր երգում,
Ոչ ողբ ասում սգաւոր։

Սև լեռների մռայլ ծոցից
Խլած հսկայ գոչիւններ,
Սև ժայռերի գոչիւններից
Նա կազմել էր իր երգեր։

Պղտոր-կարմիր գետը յուզած
Այնտեղ ունէր իր բաժին,
Մայր բնութիւնն էլ զարհուրած
Միացել էր այդ երգին...

Երբ ժայռերը գոռում էին,
Հայն ի՞նչպէս լուռ կենար,
Երբ լեռները գողում էին,
Մեր սիրտն ի՞նչպէս դիմանար։

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրեր վաղուց մոռացած,
Եւ դուրս ընկանք մեր տներից
Դէպ սուրբ վաթան աւերուած...

Լո՛ւռ կաց, քամի՛, մի փչիր, լո՛ւռ.
Շատ յուզեցիր ծովակին,
Թո՛ղ շշնջայ մեղմիկ զեփիւռ,
Թո՛ղ, հանգիստ թո՛ղ ծովակին։

Լո՛ւռ կաց, ծով, դաքերի լալկան,
Էլ բաւ այսքան հառաչներ...
Մենք զօր ունինք սուր, հրացան,
Շուտ վերջ կ'առնեն քո ցաւեր...

Թո՛ղ միայն մեզ շուտով լողանք,
Թո՛ղ որ հասնենք այն ափին.

Տե՛ս, լսում են ճիչ, հառաչանք,
Աղերս ու ողբ անմեղին...

Դէ՛հ, ընկերներ, զարկե՛նք թիերը,
Հզօր բազկով միասին.
Մօտ է ափը, հէ՛, ախպէրներ,
Հա՛, հասանք ձեր հաւարին...

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ 4/16 ապրիլ 99

Իմ անցեալ նամակը վերջացրի այս խօսքերով. „... Հայերին յետ մղելու համար Գօլիցինի քաղաքականութիւնը ոչ մի միջոցի մէջ խտրութիւն չի դնում։ Բայց այդ դառն ճշմարտութիւնը ապացուցանելու համար ինձ հարկաւոր է կանգ առնել Երրորդ փաստի, այն է՝ հայոց դպրոցների փակման և նրանց կալուածների յափշտակման վրայ, որ տեղի ունեցաւ այնքա՛ն վայրենի, այնքա՛ն անամօթ կերպով..." Այս նամակով ուզում եմ կատարել խոստումս, բայց հարցը աւելի պարզած լինելու համար՝ թոյլ տուէք ինձ մի փոքր հեռից սկսել։

Սրանից դեռ 63 տարի առաջ, հայոց եկեղեցու համար կազմած „մեծադղորդ" „Պոլժենիա"-ով, մեր հոգևորականութիւնը և առհասարակ Ռուսաստանի հայ համայնքը պաշտօնապէս իրաւունք ստացաւ ունենալու իր սեփական եկեղեցական-ծխական դպրոցները։ Երեսնական և քառասնական թուականներին, երբ Անդրկովկասը դեռ չէր մաքրել իր վրայից ռուս-պարսկական և ռուս-թիւրքական պատերազմների արեան հետքերը, բնականաբար, դժուար էր ուժգին կերպով հետքերը, բնականաբար, դժուար էր ուժգին կերպով նիւթերել դպրոցական գործին։ Բայց 50-ական թուականներից, երբ երկրում՝ վերջնապէս հաստատուեց խաղաղութիւն և միւս կողմից հայոց հասարակութեան մէջ էլ, եւրոպական և ռուսաց մտքի զօրեղ ցնցումների պատճառով, սկսուեց մտաւոր վերածնութիւն, կովկասեան կեանքի մութ հորիզոնի վրայ սկսեցին պլպղալ լոյսի և գիտութեան թոյլ կայծեր, երևան եկան եկեղեցական-ժողովրդական դպրոցներ։ Մատթէոս կաթողիկոսը, որ՝ իր շատ թերութիւնների հետ միասին՝ ունէր մի շատ մեծ արժանաւորութիւն — անսահման սէր դէպի ուսումնարանը — հիմք դրեց մեր ժողովրդական դպրոցներին, օգուտ քաղելով այն իրաւունքից, որ օրէնքը տալիս էր հայոց հոգևորականութեան պետին։ Ոչ աւելի քան 15-20 տարուայ ընթացքում, մանաւանդ 70-նական թուականներից սկսած, երբ Կովկասի հայոց մամուլի մէջ մի զօրեղ պրոպագանդա սկսուեց յօգուտ ժողովրդական կրթութեան, — այդ դպրոցների ուժը և թիւը աճեց ու հասաւ մի պատկառելի մեծութեան։ Երբ 1882 թ-ին, Գէորգ կաթողիկոսի հաւանութեամբ, Թիֆլիզում կայացաւ առաջին Հայոց Ուսուցչական ընդհանուր ժողովը, հայոց դպրոցական շարժման այդ նշանաւոր հանդէսը, — շատերը առաջին անգամ միայն տեսան և զգացին, թէ ինչ հսկայական քայլեր է արել կրթութեան գործը առաջաւոր Ասիայի մի փոքրիկ ազգի մէջ, որ, չնայած իր խաւար անցեալին, հերոսական ջանքեր էր թափում կուլտուրական կարապետ լինելու երկրի մէջ։ Ժողովը ցոյց տուեց, որ Կովկասը պատած է հայոց ժողովրդական դպրոցների մի ամբողջ ցանցով — մօտ 500 դպրոցներ 20 հազար աշակերտներով և մօտ 1,000 ուսուցիչներով ու վարժուհիներով, որոնք անձնուիրաբար ընդհանուր կրթութիւն և գրագիտութիւն են տարածում այն վայրերում, ուր տարիների ընթացքում թագաւորել է միմիայն կոպիտ բռնութիւն և տգիտութեան բթացնող ոգին...

Տարաբախտաբար 82-ի Ուսուցչական ընդհանուր առաջին ժողովը, որտեղ վճռուեց երկրորդ ժողովը գումարել Էջմիածնում, եղաւ հայոց դպրոցական պատմութեան վերջին հանդէսը։ Հազիւ 3 տարի անցած, 1885-ին, իշխան Դօնդուկով-Կորսակովը, ինչպէս յիշեցի իմ առաջին նամակում, անխնայ կերպով — ի հարկէ յանուն „ռուսացման" — փակել տուեց այդ դպրոցները, նրանց արդիւնաւոր գործունէութիւնը քաղաքական ինտրիգի նոր ասպարէզ դարձնելով։ Եւ այդ օրուանից ահա վերջնական կերպով հրապարակի վրայ դրուեց այն դժբախտ և ամօթալի հարցը, որ ամբողջ Ռուսաստանում և մանաւանդ կառավարչական գաղտնի գրագրութիւնների մէջ յայտնի է „հայոց դպրոցների հարց" անունով...

Դպրոցների առաջին փակումը 1885 թ-ին տեղի ունեցաւ այնպիսի տգեղ պայմանների մէջ, որ պատիւ չի կարող բերել ոչ միայն ռուսաց կառավարութեան, որ սիրում է պարծենալ օրէնքների բազմահատոր ժողովածուներով, այլ նոյնիսկ այնպիսի բազշիբօղուկ կառավարութիւնների, ինչպէս են՝ օրինակ՝ թիւրքաց և պարսից կառավարութիւնները, որոնց օրէնքը բռնի ուժն է, — այն է, կովկասեան կառավարչապետը փակել տուեց հայոց դպրոցները այն ժամանակ, երբ Էջմիածնի կաթողիկոս Գէորգը մեռած էր, 1884-ի կաթողիկոսական ընտրութիւնը, որ վերջացաւ Ներսէս Վարժապետեանի ընտրութեամբ, չէր հաստատուած և դեռ ևս տեղի չէր ունեցել 85-ի ընտրութիւնը, երբ կաթողիկոս դարձաւ Մակարը։ Էջմիածնի հայոց սինոդը, որին Դօնդուկով-Կորսակովը, ռուսաց դպրոցների հոգաբարձու Եանովսկու խորհրդով, նեղն էր ձգել, միմիայն մի բան էր խնդրում — սպասել մինչ կաթողիկոսի ընտրութիւնը, քանի որ ինքը, նոյնիսկ օրէնքի մի այնպիսի բարձրագիր ներկայացուցիչ, ինչպիսին է կառավարչապետը, կարող է անտես անել միապետական երկրի մէջ հասկանալի մի այնպիսի օրինականութիւն, թէ չի կարելի որ և է տան մէջ՝ առանց տանտիրոջ բռնի փոփոխութիւն անել... Ինտրիգների սիրահար Եանովսկին, ընդհակառակը, ինչպէս երևում է, շատ յարմար էր համարում հարուածը տալ հէնց այն րոպէին, երբ տանտէր չկար, և այդպէս էլ արեց. — հարուածը տուեց, և այնքան խիստ, որ մի երկու շաբաթուայ մէջ 500 դպրոցների հետքն անգամ չմնաց...

Այս փոքրագութիւնը լաւ հասկանալու համար՝ թոյլ տուէք ինձ մի քանի խօսքով բնորոշել այդ հերոսին — Եանօվսկուն։ Ի՞նչ է Եանօվսկին։ Ապականած բիւրօկրատիայի տիպական ներկայացուցիչ։ Քիթը բռնած քամուն՝ նա հոտոտում է, թէ որ կողմումն է ուժը և որտեղ է „չինը“ ու „պպտիւը“։ Փոխարքայութեան օրերին, երբ այլ քամիներ էին փչում և մանաւանդ Լօրիս-Մելիքովի „դիկտատորութեան“ ժամանակ, երբ չկային այժմեան „ազգայնական“ հարցերը, Կիրիլլ Պետրովիչ Եանօվսկին բոլորովին այլ մարդ էր. Հայոց դպրոցները պտտած ժամանակ՝ նա մի գլուխ գովում էր և դիմելով աշակերտներին ասում էր. „Լաւ սովորեցէք մայրենի լեզուն. դա ամէն մի մարդու առաջին պարտականութիւնն է“, և մի քիչ ժպտալով աւելացնում էր. „Գիտէ՞ք, ես էլ հայ եմ և ձեզանից աւելի լաւ հայ. տեսէ՞ք, ձեր ազգանուն միայն վերջն է „եան“, մինչդեռ իմ ազգանունս սկսւում է „եան“-ով...“ Բայց այլ հովեր փչեցին, երբ Պօբեդօնոսցեվեան րէժիմը տիրեց Ալէքսանդր III-ի թագաւորութեանը, և ահա Եանօվսկին՝ հայոց որ և է դպրոց մտած ժամանակ՝ արդէն կատաղած գազանի նման մռնչում էր. „Դա ի՞նչ է. հայոց լեզու, Հայաստանի աշխարհագրութիւն, հայոց երգեր. Ռուսաստանի մէջ միայն մի լեզու կայ՝ ռուսաց լեզուն և միայն մի ազգ՝ ռուս ազգը...“ Եւ մի օր, երբ մի փոքրիկ երեխայ այն հարցին, թէ „ազգով ի՞նչ ես“, պատասխանել էր՝ թէ „Հայ եմ“, — Եանօվսկին՝ մոռացած պատկառանք ու ամօթ, մոռացած, որ երեխայի հետ է խօսում, գոչել է. „Լռի՛ր. ես հայոց ազգ չեմ ճանաչում. ասա սրանից յետոյ՝ թէ ռուս ես“»..

Գրականութեան մէջ լաւ անուն ստանալու համար՝ դպրոցական գործի այդ անխիղճ դահիճը ազատամիտ յօդուածներ է գրում ամսագիրների մէջ, պաշտպան հանդիսանալով դաստիարակութեան նորագոյն սիստէմների, մայրենի լեզուի անհրաժեշտութեան և այլն, իսկ իրականութեան մէջ, դժբախտ Կովկասում, այս բոլորը ծալած մի կողմ դրած՝ նա անխղճօրէն հալածում է մայրենի լեզուն, չի ճանաչում ոչ մի ազգութիւն, մեռցնում է ուսանողի և ուսուցանողի ամենաթոյլ ինքնուրոյնութիւնը, դպրոցական պարապմունքները վերածելով իսկապէս միայն կրօնի, գեղագրութեան և գործնական այգեպանութեան դասերի՝ անարգել առաջ է քշում ամենաթացուցիչ դաստիարակչական մի սիստէմ. լցնելով դպրոցները լրտեսներով, նա դարձրել է դպրոցական վարչութիւնը ժանդարմական հիմնարկութեան մի բաժին, — և այդպիսով այսօր հասցրել է կովկասեան ամբողջ շրջանի դպրոցական գործը մի այնպիսի ոստիկանական վիճակի, որ սոսկում է ազդում ամէն մի օրինաւոր մտածողի...

Շատ սրամիտ մի նկատողութիւն արեց մի օր իմ մի ծանօթը. „Եանօվսկին, միացնելով իր ազգանուն մէջ երեք ազգութիւնների ազգանուն վերջաւորութիւնները՝ Հայի „եան“-ը, ռուսի „օվ“-ը և լեհացու „սկի“-ն — միացրել և հանճարեղ կերպով խառնել է իր անձի մէջ այդ երեք ազգութիւնների բոլոր պակասութիւնները, առանց նրանց արժանաւորութիւնների — Հայի եսականութիւնը, ռուսի չինասիրութիւնը և լեհացու նենգամտութիւնը“։ Եւ ահա այդ զզւելի „խառնուրդն“ է, որ քսան տարուց իվեր տակնուվրայ է անում մի ամբողջ երկրի կրթութեան գործը և որ այժմ էլ, օգուտ քաղելով Գօլիցինի սայթաքուղղութիւնից, երկրորդ անգամ աջողեցրեց հայոց դպրոցների փակումը և այս անգամ մի չտեսնուած մանգօլական նորութեամբ՝ կալուածների խլումով...

Բայց ներեցէք ինձ, այս փոքր շեղումից յետոյ՝ նախքան դպրոցների երկրորդ փակման մասին խօսելը, պատմել ձեզ, թէ ինչպէս եղաւ նրանց առաջին վերաբացումը Մակար կաթողիկոսի օրով՝ և ինչ պայմաններուս...:

Դեռ Մակարը պաշտօնապէս չէր հաստատուած կառավարութիւնից, որ տեղեակ շրջաններում գիտէին, թէ նրա կաթողիկոսութեան առաջին գործը կըլինի դպրոցների վերաբացումը։ Ինչպէս յայտնի է, Մակար արքեպիսկոպոսը, 1885-ի ընտրութեան ժամանակ, կառավարչական թեկնածու էր և այդ պատճառով Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեան, որ ձայների առաւելութիւն էր ստացել, մնաց մի կողմ և կաթողիկոս հաստատուեց Մակար, որի անունը ժողովրդի աչքում՝ քիչ-շատ համակրելի դարձնելու համար՝ ռուսաց կառավարութիւնը նախօրօք արդէն համաձայնութիւն էր տուել վերաբանալ փակուած դպրոցները, այն պայմանով միայն, որ դպրոցները այլևս չունենան նախկին ժողովրդական բնաւորութիւնը, այլ գտնուէն հոգեւորականութեան անմիջական իշխանութեան տակ։

Այդ իմաստով էլ Մակար կաթողիկոսը առաջարկութիւն արեց, և դպրոցները 1886 թուին վերաբացուեցին։ Կար և մի այլ կարևոր խնդիր՝ ուսուցիչների և վարժուհիների ցէնզի (ուսուցչութեան իրաւունք) խնդիր, որի համար Մակարը 6 տարի ժամանակամիջոց խնդրեց, պարտաւորուելով մինչ այդ ժամանակի ըմանալը հայոց դպրոցների դասատուներին փոխարինել ցէնզաւորներով։ Ինչպէս երևում է, ծերացած կաթողիկոսը „յոյս ուներ“, — եթէ այս դարձուածքը կարելի է գործածել, — որ ինքը հազիւ 5-6 տարի կ'ապրի, իսկ իրանից յետոյ „թէկուզ ջրհեղեղ լինի“։ Այսպէս էլ եղաւ։ Վեց տարին չլրացած՝ այն է 1891-ին՝ Մակարը վախճանուեց, և երբ 1892-ին տեղի ունեցաւ Խրիմեանի ընտրութիւնը, իսկ 1893-ին նրա հաստատութիւնը և փառաւոր մուտքը Կովկաս, ամբողջ հայոց հասարակութիւնը համոզուած էր, որ նոր կաթողիկոսը, շնորհիւ իր ահագին ժողովրդականութեան և ունեցած լաւ համբաւի, կարող կըլինի դպրոցական հարցը աւելի հիմնաւոր կերպով կարգադրել և այդպիսով մէջտեղից վերացնել այդ մեծ „ցաւը“։ Նոյնիսկ 1893 թուին՝ ամառը, երբ նոր կաթողիկոսը չէր հասել Կովկաս, Անդրկովկասի համարեա բոլոր կողմերում, հայոց դպրոցների դասատուները մեծ եռանդով աշխատում էին պատրաստուել քննութիւն տալ և ցէնզ ձեռք բերել, որպէսզի, համաձայն կառավարութեան պայմանագրի, իրաւունք ունենային ուսուցչութիւն անելու ծիսական ուսումնարաններում...

Սակայն դեռ այդ ժամանակ նկատելի եղաւ, որ հոգաբարձու Եանօվսկին „գաղտնի“ դիտաւորութիւններ է սնուցանում իր գլխի մէջ. նա ամէն կերպ ծածուկ հրահանգներ էր տալիս կտրել ցէնզի համար քննութիւն տուող հայ ուսուցիչներին և վարժուհիներին և այդ պատճառով նոյնիսկ շատ լաւ քննութիւն տուողները անհասկանալի մերժումն էին ստանում... Հե-

տևանքն այն եղաւ, որ բազմաթիւ պատրաստուողները, լաւ տեսնելով, որ կառավարչական դպրոցների վարչութեան կողմից դաւեր են լարուում, թողեցին դպրոցական ասպարէզը և հեռացան ընդմիշտ...

Վերայ հասաւ 1894 թուականը։ Կառավարութիւնը յայտնեց Էջմիածնի հովվապետին, թէ Մակար կաթողիկոսին տրուած վեցամեայ ժամանակն անցել է և ուրեմն դպրոցական հարցը պէտք է համարել հերթական։ Վեհափառ Խրիմեանը յաջողութեան շատ քիչ յոյսեր էր տալիս և՝ ոչ մի ելք չգտնելով, նա դիմեց Պետերբուրգ, խնդրելով էլի մի տարով յետաձգել պայմանաժամը։

Այս առիթով թոյլ տուէք ինձ յիշատակել հետևեալ բնորոշ փաստը։ Ժողովրդական լուսաւորութեան այն ժամանակւայ մինիստր Դելեանով — ազգով հայ — ստանալով կաթողիկոսից պայմանաժամը մի տարով յետաձգելու խնդիրը, Պետերբուրգում յայտնի մի հայ պաշտօնեայի ասել էր հետևեալ խօսքերը. „Չեմ կարող բացատրել, թէ ինչու Նորին Վեհափառութիւնը մի տարով է յետաձգում խնդիրը. մի այսպիսի կարևոր խնդրի համար՝ պէտք է աւելի երկար յետաձգում խնդրել, և իբրև կաթողիկոսական առաջին խնդիրը՝ կառավարութիւնը անկասկած կը յարգէր։“ Ցիշած հայ պաշտօնեան — ներեցէք ինձ, որ անկարող եմ անունը տալ — դիմում է Թիֆլիզ՝ իմանալու պատճառը։ Հէնց այդ ժամանակ՝ 1894-ին, կաթողիկոսը եկել էր Թիֆլիզ, որտեղից պիտի գնար Պետերբուրգ, դիմումն անելու կայսրին, համաձայն Անդրկովկասի հայերի արտայայտած ցանկութեան, օգնելու Թիւրքիայի հայերի դատին... Եւ ահա՝ երբ ծերունի հայրապետին՝ մտերմաբար հարցնում են, թէ ինչու է մի տարով յետաձգում խնդրել, քանի որ այդ մի տարին այնքան քիչ ժամանակ է, որ նոյնիսկ մինիստրին զարմացրեց, կաթողիկոսը պատասխանել է. „Ինքս ալ չգիտէի, թուղթը ստորագրեր գացեր էր։ երբ իմացայ, թէ մէկ տարի գրած է մէջը. ինքս ալ նեղացայ, բայց ուշ էր...“

... Դառնանք պատմութեան։ — Սկսուեցին գրագրութիւններ Պետերբուրգի և Էջմիածնի կամ աւելի լաւ է ասել Եանովսկու և Պետերբուրգի մէջ, որոնք տևեցին մինչև 1896 թուականը։ Եւ ահա՝ երբ յաջորդ տարին եկաւ իշխան Գոլիցին և միքանի ամիսներ անցնելուց յետոյ Եանովսկին յանձին նոր կառավարչապետի պարարտ հող գտաւ վերջին հարուածը տալու, — այդ հարուածը տուեց։ Հայոց հոգևոր իշխանութիւնը տրամադրութիւն ցոյց տուեց նոր զիջումներ անելու, վերջնապէս պարտաւորուեց միմիայն կառավարչական ցէնզ ունեցողներին դաստատու կարգել, — բայց անօգուտ։ Իշխան Գոլիցին փափագ ունէր իրեն անմահացնելու համար անպատճառ մի ուժգին քայլ անելու, և այդ նա արեց։ Խճճելով հարցը զանազան քաղաքական ինտրիգներով, „հայկական հարցով“ և „սեպարատիզմի“ (անջատման) ուրւականով՝ նա հրամանագրեց փակել հայոց բոլոր ծխական-եկեղեցական դպրոցները, պատւէր տալով զէնքի դիմել որևէ դիմադրութեան դէպքում։ Նորից մանուկների արտասուք, սրտաճմլիկ տեսարաններ փակուած դպրոցներում, նորից յուսահատ ծնողների կսկիծ...

Բայց դա միմիայն ծաղիկներն են. տեսէք պտուղը — հայոց դպրոցների կալուածքների յափշտակութիւնը, որի նման ապօրինութիւն Կովկասը իր պատմութեան մէջ չի տեսել գուցէ և ոչ մի անգամ...

———

Վերջին նորութիւն։ Երէկ վստահելի աղբիւրից իմացայ, որ իշխան Գոլիցին մի նոր զեկուցում (դոկլադ) է ներկայացրել միրիստրների խորհրդին և առանձնապէս կայսրին՝ դարձեալ կովկասեան հայերի դէմ։ Ես կ'աշխատեմ թէ անցեալ տարւայ և թէ այս վերջին զեկուցումները ձեռք բերել և ուղարկել ձեզ՝ ամբողջութեամբ տպագրելու համար։ Առայժմ այսքանը միայն շտապում եմ հաղորդել, որ իշխան Գոլիցին իմիջի այլոց թոյլատրութիւն է խնդրել՝ Անդրկովկասում գոյութիւն ունեցող հայոց բարեգործական ընկերութիւնները սղմել կամ — ժողովրդական ոճով ասած — խուզել, իբրև վտանգաւոր հիմնարկութիւններ։ Տարաբախտաբար, ինչպէս երևում է, այդ իրաւունքը նրան տրւելու է, և ուրեմն շուտով՝ երկար տարիներից իվեր գոյութիւն ունեցող օրինական ընկերութիւնները („Կովկասեան հայոց բարեգործական ընկերութիւնը“, „Մարգասիրական ընկերութիւնը“, „Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը“), որոնք ուրիշ նպատակ չունին, բայց եթէ քաղցածին հաց տալ և աղքատին նպաստ, կ'ենթարկւին միանգամայն անարդար ճնշումների։ Եկէք ու մի՛ ասացէք, թէ այժմ հայերին արգելում են նոյնիսկ բարեգործութիւն անել... Ներկայ դէպքում կրկնակի ցաւալի է այն, որ Գոլիցին իրաւունք է խնդրում հարկաւոր դէպքում՝ այդ ընկերութիւնները փակել — մի իրաւունք, որ, երևի, նոյնպէս նրան կը տրւի և որից Կովկասի այժմեան կառավարչապետը, իհարկէ, շատ շուտով կ'օգտւի իրեն յատուկ „հայահալած“ եռանդով...

Է. ԱԿՆՈՒՆԻ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Լա Հէյի Խաղաղութեան խորհրդաժողովին ուշադրութիւնը հրաւիրելու համար հայկական խնդրին վրայ, բազմամարդ հայ միթինգներ տեղի ունեցեր են վերջերս Բուլղարիոյ և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու զանազան կէտերու վրայ։ Առաջին երկրին մէջ հետևեալ քաղաքները՝ Վառնա, Սլիվէն, Ռուսչուք, Քարաբունար, Թ. Բազարճիք, իսկ երկրորդին մէջ՝ Նիւ Եորք, Ֆրէսնօ, Պրովիդէնս և Բոստոն։

Ստորև կը հրատարակենք Վառնայի միթինգին որոշումը, որ Խորհրդաժողովին բացման օրն իսկ հեռագրեր է անոր նախագահին և մասնակցող բոլոր պետութիւններու արտաքին գործոց նախարարներուն։ Նոյն բանաձևն ընդուներ են նաև Բուլղարիոյ միւս միթինգները։ Բուլղարիոյ բոլոր միթինգներն ալ պատւիրակ ընտրեր են պ. Մինաս Չերազը, իրենց որոշումները Խորհրդաժողովին առջև պաշտպանելու և իհարկին մասնակի դիմումներով ուժ և մղում տալու համար անոնց։

„Վառնայի հայ բնակչութիւնը 3000 հոգիէ ընդհանրական միթինգ մը գումարելով եկեղեցու բակին մէջ,

1899-ի ապրիլ 23 | 5 մայիսին, յարգանօք կը խնդրէ ձեզ՝ ձեր նախագահութեան ներքեւ գանուող խորհրդաժողովին ու չադրութեան ենթարկել ստորեւ պատճառաբանուած իղձերը.

Նկատելով որ վերջին քսան տարուան միջոցին, հակառակ Բերլինի 61 յօդուածին որ մեռած տառ կը մնայ, Թիւրքիոյ հայոց վիճակը, բարելաւելու փոխարէն չէ դադրած վատթարելէ եւ յանգած է խմբական ջարդերու թաւկանի մը որուն վերջը չի նախատեսուիր.

Նկատելով որ սովը — ընդհանուր անապահովութեան բնական այդ հետեւանքը — կը շարունակէ աւերել հայ աշխարհը, որ արդէն չարաչար փորձանքներ կրած է.

Նկատելով որ այդ անտանելի կացութիւնը կըսկսի հայոց մէջ արթնցնել — նոյն ռէժիմը կրող միւս ժողովուրդներուն պէս, — ապստամբութեան ոգին որուն յարակից եղած է գրեթէ միշտ ազգերու միջեւ պատերազմ մը.

Նկատելով վերջապէս որ սիստէմատիկ կոտորածներու ասպարէզ եղած Հայաստանի արդի վիճակը, ինչպէս նաեւ հայկական խնդրին լուծման յապաղումովը միջազգային խաղաղութեան սպառնացող վտանգը տրամադծապէս ներհակ են այն մարդկայնական նպատակներուն, որոնց հետամուտ է Զինաթափութեան Միջազգային Խորհրդաժողովը.

Այս բոլոր պատճառներով, Վառնայի հայ բնակչութիւնը, որ մասամբ կը բաղկանայ Ջարդերէն խուսափած փախստականներէ, ընդհանուր միտինգի մը դումարուած, արտայայտել կը կարծէ բովանդակ հայ ազգին իղձերը, հրաւիրելով Խորհրդաժողովին բարեհաճ ուշադրութիւնը Թիւրքիոյ հայերուն կացութեան վրայ եւ թախանձելով զինքը մեր երկրին մէջ մտցնել, միջազգային համաձայնութեամբ մը, յարմար եւ ազդեցիկ կերպով գործադրելի միջոցներ հաստատելու համար խաղաղ եւ աշխատասէր բնակչութեան մը կեանքին, գոյքին եւ պատուին ապահովութիւնը»։

* * *

Բուլղարական „Նարոդնի Պրավա“ թերթէն կ'իմանանք թէ Մակեդոնական Հաւաժողովը, որ վերջերս գումարուած էր Սոֆիայի մէջ, պաշտօն տուեր է փաստաբան պ. Իւդէվին երթալ Լա Հէ, անձամբ ներկայացնելու համար Խորհրդաժողովին՝ մակեդոնացի հայրենասէրներու իղձերը։

* * *

Լոզանի համալսարանին ուսանողութիւնը, Խաղաղութեան վեհաժողովին առթիւ, „Բաց նամակ“ վերնագրով յայտարարագիր մը հրատարակած և խրկած էր դիւանագէտներուն և մամուլին։ Այդ յայտարարագրին մէջ, կրակոտ ուսանողութիւնը կծու և սրտաշարժ կոչ մը կ'ընէր Եւրոպայի հանրային կարծիքին, մանաւանդ շահախնդիր և անխիղճ դիւանագիտութեան, — որ քաղաքակրթութեանը թշնամանող անտարբերութիւնով մը անկարեկիր մնաց Թիւրքիոյ քրիստոնեաներու անլուր կոտորածին, — որպէսզի օդային խօսքերէն գործի անցնելով՝ տառապող ու մարտիրոս ժողովուրդները փրկազատէ ոճրագործ սուլթանի ձեռքէն։ Տեղի սղութեան պատճառով հարկադրուած ենք միայն վերջաբանը դնել հոս։

„Արդ կապենք մեր խօսքը վերջացնելով թէ մարդասիրական և եղբայրական պարտականութիւններու սրբազան զգացումը թոյլ տուաւ մեզի գործածել մարդկային խօսքի ամէնէն բացայայտիկ ֆրազները, բողոքելու համար ձենէ ամէն անոնց դէմ, որոնք հարստահարուած ազգերու չօգնելէ զատ, ձեռք կուտան նոյն իսկ անոնց լուծին պահպանման։ Ատոնք են ճշմարիտ բռնակալները, որովհետև գիտեն ըրածնին։ Մենք ուրեմն ձենէ անոնց կոչում կ'ընենք, որոնք դեռ չեն մոռցած դժբախտութեան մէջ իրենց եղբայրներուն տալիք յարգանքը և ձեռնտուութիւնը։

„Եթէ չէք ուզեր անոնց օգնութեան հասնիլ, գոնէ ձգեցէք հարստահարուածները որ ազատօրէն գործեն ինչպէս նաև անոնք որոնք կ'ուզէին անկեղծօրէն օգնել անոնց իրենց լուծը թօթափելու և ազատութիւնին ձեռք ձգելու համար։

„Աւելի ուժգին կերպով կոչ կ'ընենք մանաւանդ այն ժողովուրդներուն զորս դուք կը ներկայացնէք. անոնք որոնք իրենց տունին տէրն են։ Ոբքա՞ն ատեն դեռ պիտի հանդուրժեն այս բռնաւոր „Մեծ մարդասպանին“, որ իր պալատին մէջ պահ կը մնայ իբրև մեծագոյն նախատինք մը և խայտառակութիւն մը մեր դարուն համար։ Չէ՛, արդարև մենք չպիտի կորսնցնենք մեր յոյսը. ձեր կարողութիւնը և ձեր գերիշխանութիւնը այն գրանիդէ ժայռն է որուն դէմ ամէն բռնաւոր որ կը զարնուի կը կորսուի, ինչպէս նաև ամէն դիմադարձ կառավարութիւն։

„Ադոնց վերջ մը դնելու համար պէտք է ամէն բանէ առաջ առնական գործ, չէ թէ լոկ խօսքեր զորս քամին Վոսփորի ալիքներուն վրայէն կը փչէ կը տանի“

## ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

—

*Միջազգային կացութեան մոայլը, խաղաղութեան ճիշդ կիրէմուտքին, պարզելու վրայ է, գոնէ առերեւութապէս։ Անգլիա, որ գայթակղութեան քարի մը պէս աշխարհի ամէն կողմը ոտքերու կը զարնուէր, հաւաձայնութիւններ կը կնքէ բոլոր մեծ պետութիւններու հետ, միշտ, իհարկէ, իր առեւտրական գերազօրութիւնը անվթար պահելով։*

*Սուդանի պատերազմէն ետքը Ափրիկէն, այդ սեւ խափշիկուհին, այլեւս քաղաքակրթութեան ճակատաթի անիւներուն տակ ինկաւ։ Անգլիա այդ արեւակէզ ցամաքին վրայ ալ Փրանսայի հետ ամուշի կապեց իր անհամաձայնութիւնը։ Թիւրքիան, որ ապրելու ժամանակը յանձն կ'առնէ, պարզապէս պետութեանց հակառակորդութենէն բռնադատուած, Ափրիկէի մէջ ունի չունի վրայ կուտայ։ Եգիպտոսէն ետքը, ուր օսմանեան տիրապետութիւնը մոմիաներու կարգը անցած է, Թարապուլուսէն ալ — օսմանեան ծաղիկ երիտասարդութեան խամրոցը — պիտի վռնտուի։*

*Ծայրագոյն արեւելքի մէջ Անգլիոյ եւ Ռուսիոյ սուր պայքարը հաւաձայնութեան մը յանգած է, Չինու երկաթուղիներուն առթիւ, որոնք առանց արիւնի աւելի ապահով աշխարհակալութիւններ կ'ընեն։ Անգլիա յանձն կ'առնէ Չինու մեծ պարիսպէն վեր երկաթուղի շանցնել։ — Չինացիները որքան պէտք ունէին այս պահուն մեծ պարիսպի մը „կարմիր սատանաներուն“ դէմ։ Ռուսիա ալ կը խոստանայ Ծանկցէ Քեանկ գետի հովտին մէջ — Չինու ամէնէն հարուստ եւ կենդանի երակը — Անգլիան շնեղել։ Անգլիական անձնասիրութիւնը գոհ է։ Սալիսբարի հաւատարիմ իր նշանաբանին Sero sed serio (ուշ բայց լրջօրէն) աշխարհի ամէն կէտերու վրայ ապահովեց Անգլիոյ տիեզերական շահերը։ Երանի թէ փրկէր նաեւ իր ճակտին վրայի Շէյքսպիրեան արատն ալ։*

*„Դեղին լէզը“ առանց քունը հարամ ընելու կրգայ թէ Կիւլիվէրի հսկային նման իր վրայէն ճանճի պէս մարդեր կ'անցնին, բայց հոգն ալ չէ „անմահութեան բաժակը“ կըլլած մարդու պէս, իրենց փոխաբերական լեզուով։*

*Երկու մեծ պետութեանց փոխադարձ հաւաձայնութիւնը աշ-*

խարհի սրտին վրայ ծանրցող վախը քիչ մը թեթեւցուց: Բայց դիւանագիտական բարի տրամադրութիւնները աշխարհի մէջ կը ներշնչւին շահերու մուսայէն:

Խաղաղականի մէջ ալ Սամօայի միջադէպը եւ Ամերիկայի լուտանքները Գերմանիոյ կայսրը ցաւագին եւ խառը դիրքի մը մէջ դրին: Քայզերը չկրցաւ իր „երկաթէ ձեռնոց“-ները գործածել այս պատւոյ կէտին. ինք, որ Աստուծմէ զատ մարդէ չէր վախնար, այնքան քծնող ձեւ մը առաւ Ամերիկայի հանդէպ, որ եթէ հոմեր մը երգէր միր դարավերջի դիւցազներգութիւնը Թերսիդի դերը պիտի տար Գերմանիոյ ամէնաչաղթ բռնակալին:

Ինչքան ալ միջազգային յարաբերութիւնները լաւագուշակ երեւան, ինչքան ալ վազէվազ աշխարհակալութիւնները իրենց քայլերը կամացցնեն, պէտք է նկատել զանոնք դիւանագիտական ոլորքոլոր ուղիին մէջ, քրտինքնին ժողվելու համար պարզ դադար մը:

* * *

Աշխարհակալութեանց տարտամ եւ հապճեպ սահմանազծումներու միջոցին, Ռուսիոյ ցարին առաջարկած „իրական եւ տեւական“ խաղաղութեան համաժողովը պիտի գումարւի: Խաղաղութեան հրաւէրը ընդունեցաւ „իզէն“ աղաղակներով. մինչեւ իսկ մեռելները դուրս թուան „վրէժ“ շշնչելով...

Սակայն երբ քաղաքակիրթ աշխարհը շլացած էր երիտասարդ կայսրի մարդասիրական իդէալէն „պատերազմի դէմ պատերազմ“ յայտարարելով, միւս կողմէն Ռուսիան անողոք ձեռքով մը կը մարէր հիւսիսային հորիզոնին վրայ փայփլուն մեղամաղձոտ հիւսիսայգը, Փինլանդան, խաւարումին մէջ խաչելութեան քարոզը աւելի ահազդեցիկ ընելու համար:

Միջազգային խաղաղութեան համաժողովին Թիւրքիան ալ պիտի մասնակցի. ի՞նչ դառն հեգնութիւն: Բայց Համիդ, կը մասնակցի պայմանով, որ պետութեանց լիազօրութիւն տրւի իրենց հպատակները ուզածնուն պէս խողխողելու: Արդէն իր պատգամաւորին հրամայեր է որ համաժողովին մէջ բացարձակապէս դիմադրէ երբ արեւելեան հարցի կամ ազգայնական խնդիր ծագի:

Եթէ ժողովը միայն սուլթաններէ բաղկացած ըլլար, արդարութեան գիտակցութիւնը մազ չէր շեղեր իր տեղէն: Սուլթանը քսան տարւան չարութիւններուն ու սրիկայութիւններուն մէջ, այդքան փորձառութիւն ալ իմանալու էր: Դժբախտ ազգերը իրաւունք ունին զօրով լսելի ընել իրենց ձայնը. ապա թէ ոչ խաղաղութիւնը ցնորք է եւ թէ այդ խաչագողներու ժողովը ջուր ծամած պիտի ըլլայ միայն:

Ղա Հէի մէջ, համաշխարհային խաղաղութեան պատգամաւորները աչքէ չպիտի փախցնեն անշուշտ արձանը Սպինօզայի մեծ փիլիսոփային, որ կ'ըսէր „խաղաղութիւնը պատերազմի բացակայութեան մէջ չի կայանար, այլ միութեան եւ համաձայնութեան մէջ“: „Ամենէն մեծ ուժը ամենէն մեծ ազատութիւնն է“: Այժմէն լուր կայ թէ գերմանական պատգամաւորները պատերազմի թեր պիտի խօսին. հաւատալով որ պատերազմը մարդկային յառաջդիմութեան էն հզօր խթանն է: Գերմանացիք կը վախնան որ իրենց փողփողուն սաղաւարտները կը ժանգոտին, երբ իրաւունքը ուժէն առաջ անցնի:

Հաւանօրէն ժողովին բացումը կատարէ Հօլանդայի գեղանի թագուհին, այլաբանական արդարութեան դիցուհիի մը վեհութիւնը տալով համաշխարհային Արիսպագոսին: Վախ չկայ թէ քնքուշ թագուհին „գժտութեան խնձորը“ կը նետէ այդ ոլիմպիական համաժողովին մէջ. բայց կը վախնանք որ բռնապետական Ռուսիան Լերմոնտովի դեւին համբոյրը տայ խաղաղութեան սիրանուշ դիցուհիին...

* * *

ՄԱԿԵԴՈՆԻԱ.—Գարնան Մակեդոնիոյ մէջ շարժման մը նախատեսութիւնը չիրականացաւ:

Վալիները կը հեռագրեն թէ երկրին մէջ ամէն բան խաղաղ է շնորհիւ վեհ. սուլթանին: Որովհետեւ առանց սուլթանի հրամանին աշխարհի մէջ ճանճ մը չի տզար: Երբ Թիւրքիան „Կենաց գրքին“ մէջէն վերնայ, Թիւրք լրագիրները շէն սրտով մը պիտի շտապեն գրել „Շնորհիւ վեհ. սուլթանին Թիւրքիան կործանեցաւ, Աստուած մէկ օրը հազար ընէ“: Դարավերջը պիտի զգենք օսմանեան գրականութեան կուսափայլ շողերով:

Ռուսիա Մակեդոնիան զործիք ըրած է Թիւրքիոյ դէմ: Երբ սուլթանը քիթ ընէ, Ռուսիա արեւելքի „քրիստոնեաներու պաշտպանութեան“ ախտէն կը բռնւի:

Բայց Թիւրքիան իր բոլոր ախուվախով, ապազայի տխուր նախազգացումով կը մնայ միշտ այն անուղղայ հրէշը, որ ժողովուրդ կառավարելու տարրական սկզբունքը պիտի չկրնայ ըմբռնել:

Մակեդոնիոյ շարժման վախին առջեւ հաշտարար ու խոհեմ ընթացք մը բռնելու տեղ, սատկիլը աչքը առած մարդու մը պէս, Դուռը սկսած է նոր տուրքերուն հետ զալիքներն ալ պահանջել, հալածել եւայլն: Դժգոհութիւնը օրէօր աւելի կ'աճի: Ռուսիոյ դեսպանը, սլաւներու եղած այդ անիրաւութեան դէմ պինդ մը բողոքեր է. բայց Համիդ, հեգնօրէն պատասխաներ է „նիչէվօ“, այն խորհրդաւոր ոչինչը որուն մէջ Պիզմարք կը տեսնէր Ռուսիոյ զարհուրելի ուժին արմատները: Բայց պէտք չէ խաբւիլ. Ռուսիա եւ սուլթան օրը երկու հեղ իրար կ'ատեն ու կը սիրեն:

Վոսփորի լեթէական ափերուն վրայ, կ'երեւի „չարութեան ծաղիկը“ մոռցնել կուտայ սուլթաններու ու սիքարիտ վիւքէլաներուն թէ կառավարութիւն մը անքարոյականութեան մաշմնացում մը ըլլալու չէ. եւ թէ այն արիւնլայ դաշոյնը որ բոցեղէն սուրի մը պէս կը պաշտպանէ „երջանկութեան դուռը“ — ուրկէ կեավուրին բողոքի ձայնը պէտք չէ ներս մտնէ— կարող է օսմանեան հոտած կշտին դառնալ, այնքան անսպասելի եւ չեշտակի կերպով, որ Եըլտըզի կախարդներն ալ չեն կրնար նախատեսել ոչ երկինքի աստղերուն, ոչ ալ երկրի ջրերուն մէջ:

Մակեդոնիոյ գերագոյն կոմիտէն խաղաղութեան համաժողովին պիտի խրկէ յիշատակագիր մը: Պերլինի դաւաճան յօդւածներէն եւ զէնըկեցութեան վիժումէն ետքը, պէտք է լսելի ընել, այն սրտապնդող վրէժխնդիր ձայնը, որ խաղաղութիւն կը բերէ ետեւէն:

* * *

ԿՐԻՏԷ.—Կրէտէն ազատելէն իվեր Եօրկիօս իշխանը, նորընծայի ջերմեռանդ հաւատքով առաջ տարաւ կղզիին խաղաղացման գործը: Սուլթանը ամէն էնդրիկ բանեցուց միւսիւլմանները դժգոհ պահելու համար: Արդէն հրաման ալ գացած է որ Ասիա գաղթեն քրիստոնեայ կառավարչի մը իշխանութեան տակ չմնալու համար:

Հռոմի դեսպանախորհուրդը վաւերացուց Կրէտէի սահմանադրութիւնը, բայց իշխանին յաջորդ մը ընտրելու ժողովին իրաւունքի յօդւածը ջնջեց:

Իշխանը որ իբր ճորտ, սուլթանին այցի պիտի զնար, յետաձգած է իր ձեռքպագի ուխտագնացութիւնը, քանի որ Համիդ դեռ խռովարար գործակալի դերը կը կատարէ:

Համիդ այդպէս կը փրկէ իր կայսրութիւնը...

* * *

ԱՐԱԲԻԱ.—Երջանիկ Արաբիան նորէն ապստամբած է. Թիւրք վաշտ մը, ապստամբներէ ջարդուելով Սանա նահանջեր է:

Համիդ այս պահուս համիսլամութեան մեծ ծրագրով կըզբաղի կ'ըսեն, Ովկիանիայէն մինչեւ Ափրիկէի ծայրը: Եթէ ապազային մարգարէին գերեզմանը խլեն, աշխարհի միւսիլմանները պիտի դիմեն Պօլիս „ոճրագործ խալիֆայի“ թիւրպէին ուխտի, անոր ժանտախտի գերեզմանին վրայ բօլէրա ցանելու համար...

* * *

ՍՈՒՏ ԵՒ ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ.—Վանի կրօնափոխութեան լուրը մեծ յուզում պատճառած է հայերուն մէջ:

Եւրօպայի մարդասիրութեան անունով հաւաքւած դրամները հաւատորսութեան եւ խիղճերու ջհուտական վաճառականութեան կը ծառայեցնեն: Թո՛ւ... Կաթօլիկները անոնց միայն կ'օգնեն, որոնք ս. Պետրոսի գոմը մտնելը աչք կ'առնեն: Անուշքերան Ազարեանը, կը խոստանայ մէկ կտորշով եղ, մէկալով մեղր բերել Հայաստանի, եթէ ոտքով գլխով պապադաւան ըլլայ:

Ընդհակառակը գերմանական „Քէօլնիշէ Ցայթունկ“ լրագիրը սրտաշարժ կոչ մը կ'ընէ բողոքական միսիօնարութեան, որ հաւերուն նկատմամբ մարդասիրական մաքուր սահմանէն դուրս ելլելով, կաթօլիկներուն պէս „խղճի առուծախով“ չզբաղին:

Պապականներու մոլեգին եւ աներես պրօպագանդին առջեւ Օրմանեան իր անպարագծելի մարմնին հետ քանակը հասցնելը կը նայի: Գահը նստած օրը կը կարծւէր թէ անոր ուեցք մարմինը յղի է ապագայով, այնպէս կլլեցուց թէ ճիզվիթ քաղաքականութիւնով մը սուլթանը մատին վրայ պիտի խաղցընէ. անկէց իվեր Համիդի ոսկի սիրտը գրաւելու համար գործեց ստորնութիւններ, գաղտնի դաւաճանութիւններ — մոռնալով թէ չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի — որոնք իր սարդոնեան ծիծաղին տակէն իսկ փուշ փուշ դուրս կը ցցւին: Բոլոր գործերը փուտ դերձանով շիլլւած աճպարարութիւններ են: Ներսէսի գահին վրայ փուած փառաւոր լէշ մը...:

Զարմանալի բան, այն պահուն, երբ գաւառները կրօնական ցորենքաղի սանձարձակ դաշտ եղած է, Պօլսի հանրամ հայ վարդապետները տեղերնէն չեն ճալտկար, վախնալով որ հաւկիթնին կը պաղի: Զենք ուզեր մտքերնէս չար անցնել թէ

չամէտի պէս քաշող մագնէտներ կամ այդ կուսակրօններուն քով, բայց հետաքրքիր էր իմանալ թէ ի՞ր օրուան համար գէրը դրւած են այդ սագերը: Այդքան ծուլութիւն ոչ մէկ եկեղեցականութեան մէջ տեսնուած է: Գոնէ, աչքերնուն առջեւ, օրինակ առնէին օտար քարոզիչներէն, որոնք ծով ու ցամաք պատռելով աշխարհքը նեղ կը գտնեն իրենց հաւատքը քարոզելու համար: Մեր կղերները Պոլսի մէջ չուք կ'արծեն միայն. ոչ համոզմունքի մեծութիւնը ունին, ոչ գաղափարի անձնուիրութիւնը. երբ հեռաշխարհիկ միսիոնարութիւնը մահը աչքը առած, հազարաւոր վայրենիները կ'երթայ կը քաղաքակրթէ, մեր փ ա փ կ ա ս ո ւ ն հայրսուրբերը ու սրբազանները, քթերնուն տակ իրենց եղբայրներուն երկու չոր խօսքով պզտիկ մխիթարութիւն մը ընծայելու զոհաբերութիւնը անգամ չեն հաճիր յանձն առնել: Ամբողջ ոչնչութեան գանկեր են: Եթէ մնամէջ Օրմանեանը արմաշականներն ալ իր հ ր ե շ տ ա կ ա յ ի ն պատկերին համեմատ ստեղծեց՝ ալ քար մը առնենք ծովը երթանք:

Պատրիարքարանի թուլանհոգ եւ ապիկար վարչութենէն խրախուսուած, օտարները օրօրի կը զօտեպնդուին յարձակողական դիրքերնին աւելի ամրցնելով:

Վերջերս „Մեր սուրբ հայրց դաւանութիւնը" անուն գրքոյկ մը աշխարհք եկաւ. մարդեղութիւնը՝ հայոց Ջարդերէն իվեր կաթոլիկութեան մէջ սաղմնաւորող ծզտումին, եւ դօնգիշօտական խաչակրութիւն մը հայ եկեղեցիին դէմ:

Հեղինակը հռոմէադաւան երեք սկզբնատառով վարդապետ մըն է, միայն թէ „սրամիտ-հայրենասէր" վարդապետը գրքին կողքին վրայ իբր վերտառութիւն մոռցեր է աւելցնել Ազարեանի հաւատամքին կտորը թէ „կաթոլիկութիւնը յեղափոխութեան դէմ թումբ մըն է":

Երբեք այդ ապուշ ու գռեհիկ մտքի թափթփուքը չենք նկատեր felix culpa (երանաւէտ մեղք) մը հայ կաթոլիկ կղերին դատապատմաչափ մը ընելու, ոչ ալ անոր արժանիքը նսեմացնելու համար:

Գրքոյկը կարդացողը պէտք է նախ սառն ջղեր ունենայ եւ քար ախորժակ այդքան փիս փսխունք մը մարսելու համար: Ապշութենէն ընթերցողին ոտքերը գետնէն կը կտրին, երբ կը տեսնէ սրբապիղծ ու անճոռնի յիմարաբանութիւններով խճճուած այդ քանի մը էջերը, որոնց՝ դար մը առաջ իսկ պիտի չներէինք լուսաշխարհ գալուն, արգանդին մէջ իսկ խեղդամահ ընելով զայն: Ամբողջ հայ ազգը իշու տեղ դնե՜լ...:

Քառասուն հազար պատառ կ'ըլլայ փաստաբանելու համար թէ մեր հին հայրապետները լատինադաւան եւ լատինամէտ էին. մազ մնացեր բերնէն փախցնելու թէ Օրմանեան ալ հռոմէադաւան եղած է:

Այդ անբան ու սիրտխառնուք գրուածին մէջ շեղի չափ խելք չես տեսներ. հեղինակը չի ստեր երբ ըսէ. „մարդ եմ եւ ոչինչ կայ մարդկային ախմախութիւններէն որ ինծի օտար ըլլայ": Ծծկան երեխայ մը անգամ պիտի չստորագրէր այդ խելառ եւ լղրճուկ մտքի զառանցանքներուն տակ: Քիչ մը աղելու է այդ աբեղան որ չհոտի:

Ինչ որ աւելի ըմբոստացնող է, այդ կովզլուխ վարդապետին ամբողջ հայութեան եւ հայ մամուլին վրայ արգահատանաց խղճացում մը ունենալն է. անոնց „տգիտութեան" ու „կուրութեան" առջեւ „գթութեան աչօք" կը նայի. ծիծաղելի է մանաւանդ որ իր գրքոյկով մեզ „լուսաւորելու" տխեղծ փառասիրութիւնն ալ ունի. կարծես բերանին դեռ կաթ կը հոտի: Մէկ խօսքով այդ „հողմոց" գրուածը տգէտ եւ յաւակնոտ ուղեղի մը հայելին է, որուն մէջ պուտ մը արուն չես գտներ: Ս. Պետրոսի բանալին արքայութեան դուները կը բանայ, բայց ապիկաններին մէջ մարդոց խիղճերը եւ հեղինակ վարդապետին խելապատակը կղպելու չարութիւնը ունի, ափսո՜ս:

Եթէ այդ ողորմելի վարդապետը Թօրքուէմատայի օրով ծնէր՝ շիք հաւատաքննիչ մը կ'ըլլար:

Գլխուն զօր կուտայ Պետրոսի գլխաւորութիւնը, հետեւապէս պապին գերիշխանութիւնը եւ անսխալութիւնը հաստատելու համար: Ո՛վ գիտէ, թերեւս Քրիստոս Պետրոսի զոքանչին աղւորիկ աչքերուն համար խտրութիւն մը ըրած ըլլայ: Զըլլալոց բան չէ:

Եթէ երբեք հայերը ատենով Հռոմի առաջնութիւնը ճանչցեր եւ այսօր բանի տեղ չեն դներ, ու իրենք զիրենք հաւասար կը նկատեն անոր, պէտք է հիանալ այդ ազգին վրայ, որ շատ մը այսօրուան քաղաքակիրթ ազգերէ առաջ կրօնական ազատագրութեան պէտքը զգացեր ու զլուխ հաներ է իր փոքրիկ ջղուտ ուժովը: Ինչո՞ւ զլխիկոր վերադարձ մը նորէն դէպի կրօնական բռնապետութեան լուծը. „յաւիտենական քաղաքը" չի շլացներ մեզ: Մեր անհատապաշտ նկարագիրը կ'ընդվզի այդ գաղափարին դէմ. կը մոռնան որ ժամանակակից եկեղեցական մը „Դաշանց թուղթը" „դա շանց թուղթ" է պոռաց, անցեալի հեղինակութիւնը ոտնակոխ ընելով. պրաւօ...

Եթէ կաթոլիկութիւնը մեզ պիտի ազատէ մեր թշւառութենէն — ինչպէս միամտօրէն հաւատացնել կ'ուզեն շատեր — Լեհաստանի ազատութիւնը հերիք է իրեն: Ձգեցէք ամէն մարդ իր եղովը տապկւի եւ խնայեցէք հայ լաճերուն օտարոտի քրիստոնէականները:

Ողջ զլուխնիս աւետարանին տակ դնել այս դարո՞ւն... երբ պապերով, լուսաւորիչներով ու ամայի երկինքով զբաղելէ առաջ այնքան կենսական եւ սրտի մօտիկ հարցեր կան...: Մենք կը կարծենք թէ ամէն ազնիւ ու քիչ շատ գիտակից հայ ինչ դաւանանքի ալ պատկանի՝ ատանկ փցուն ու միակին վէճերէ միշտ վեր պէտք է նայի, ազգին ընդհանուր շահը:

Բայց արդարադատ ըլլալու համար պէտք է աւելցնել որ եթէ այդ գրքոյկէն քանի մը էջ պապին շուտիկին վրայ փակցուէր, իբր խարան, ծերունի քահանայապետը - որուն փոս աչքերը հողը կը նային — միրագործողութեան չարչարանքները չէր քաշեր:

Պապերը ահա այդպիսի խըպլիկութիւններով կը շինեն իրենց „հաւատքի ամրոց"-ները, որովհետեւ իրենց թագաւորութիւնը այս աշխարհէն չէ:

—

Յ. Գ. — Այս տողերը գրւած էին, երբ հեռագիրը հաղորդեց թէ Ազարեան պատրիարքը „ի Տէր հանգեր է"... պապէն առա՜ջ...

„Հող էիր եւ անդրէն ի հող դարձցիս..."

Խե՜ղճ մարդ, կարօտը փորը եւ աչքը բաց մեռաւ, կաթոլիկութեան համար ցանած սերմերուն պտղւորիլը չտեսած այն երկրին մէջ, ուր „ծիրանին կը ծաղկի":

# ԹԻՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

—

„Դրօշակ"-ի այս տարւան № 2-ի խմբագրականին մէջ հաղորդած էինք արդէն թէ սուլթանի կառավարութիւնը 1898-ին կրկնած էր իր դիմումները Դաշնակցութեան մօտ, առաջարկելով բանակցիլ այս անգամ այն պայմաններու մասին, որոնց համար գոհացում ստանալէ ետք, Դաշնակցութիւնը կը յօժարէր դադրեցնել յարձակողական բնոյթ ունեցող իր բոլոր ձեռնարկները:

Չնայելով որ թէ մեր և թէ եւրոպական հանրային կարծիքը շահագրգռուած էին այդ խնդրով. և թէ մինչև իսկ այդ մասին կարգ մը սուտ ու սխալ տեղեկութիւններ սկսան երևան գալ ատենէ մը իվեր եւրոպական մամուլին մէջ, բայց այսօր միայն հնարաւոր կը դատէ այդ խնդրին ամփոփ պատմութիւնը դնել մեր ընթերցողներուն առջև, որովհետև դեռ վերջերս միայն, այն է մարտ 11-ին, այդ գործը յանգեցաւ ակնկալւած վախճանին, երբ Դաշնակցութիւնը պաշտօնապէս խզւած յայտարարեց ամէն յարաբերութիւն իր և Թիւրք կառավարութեան պատուիրակներուն միջև։

* * *

1896 օգոստոս $^{14}/_{26}$-ի կռիւներէն ետքն էր, որ սուլթան Աբդիւլ Համիդ առաջին անգամ խորհեցաւ պատուիրակութիւն մը խրկել Դաշնակցութեան մօտ։ Պատուիրակը՝ Տիրան պէյ Տատեան, Յարութիւն փաշա Տատեանի որդին, 1896 հոկտեմբեր 28-ին Ժընէվ եկաւ խնդրել Դաշնակցութենէն դադրեցնել իր յարձակողական ձեռնարկները, հաւաստելով թէ սուլթանը որոշապէս խոստացած էր անյապաղ մտցնել իր երկրին մէջ կարևոր բարենորոգումներ։ Տիրան պէյի ըսելով մինչև ի ն ն  ա մ ի ս բարօրութեան նոր թւական մը պիտի բացւէր Թիւրքիոյ համար...

„Դրօշակի“ խմբագրութիւնը իր պատիւրակներուն միջոցով պատասխանել տուաւ Տիրան պէյին թէ նախ՝ յեղափոխական շարժումը արտասահման գտնուող քանի մը անհատներու սարքած խաղը չէ, այլ բռնակալութեան տակ հեծող ամբողջ ազգի մը յուսահատ վճռականութեան գործը, և հետևաբար այդ շարժումն արմատախիլ ընելու միակ ճամբան այդ տանջուող ժողովուրդին պահանջները գոհացնելն էր։ Բայց ատոր համար ո՛չ թէ ելլալ ծընէվ գալու էր սին խոստումներ տալու, որոնք 1856-ի Պարիզի դաշնագրէն իվեր 40 տարի է որ անընդհատ կը կրկնուին անպատկառ ստութեամբ մը, — այլ անոնց ուղղամիտ իրագործումին ձեռնարկել Հայաստանի և Թիւրքիոյ հայաբնակ գաւառներուն մէջ։ Երկրորդ՝ Դաշնակցութեան ապակեդրօն սիստէմին համաձայն՝ ո՛չ թէ „Դրօշակ“-ի խմբագրութիւնը, այլ Երկրին կոմիտէները միայն ձեռնհաս են առկախել արդէն վճռուած յայտագրին գործադրումը, — բան մը որ բնականաբար պիտի համաձայնին ընել ո՛չ թէ թիւրք կառավարութեան խոստումներուն անսալով, այլ երբ անոր աւետած մօտալուտ արարքները զիրենք համոզելու հանգամանքն ունենան, թէ արդարև այդ կառավարութիւնը անդառնալի կերպով ոտք դրած է արդարութեան ճամբուն վրայ։

Տիրան պէյի մեկնելէն գրեթէ երեք ամիս ետք, 1897 փետրուար 4-ին, ծընէվ եկաւ երկրորդ պատիւրակ մը, պր. Վաղինակ Ա՛ճէմեան, Տիրան պէյի տուած հաւաստիքները կրկնելու։ Կացութիւնը փոխուած չէր, ուստի անոր ալ նոյն պատասխանը տրուեցաւ ինչ որ իր նախորդին։

Սուլթանը արդէն շատոնց մոռցած ըլլալու էր իր այդ երկու պատիւրակներուն միջոցով տուած հաւաստիքներն ու խոստումները, երբ երկու դէպքեր եկան տակն ու վրայ ընելու Եըլտըզը։ Խանասօրի արշաւանքը, 1897 օգոստոս $^{25}/_{6}$-ին, և անոր գրեթէ անմիջապէս հետևող, Կ. Պոլսի մէջ իսկ կատարուած նոր կարգի ահեղ գործ մը՝ օսմանեան բանկի օդը հանելու փորձը ու Բ. Դուռն պայթիւնը օգոստոս $^{6}/_{18}$-ին, անգամ մը ևս մատնանիշ ըրին Եըլտըզին հայ յեղափոխական մարմինը բանի տեղ դնելու անհրաժեշտութիւնը։

Երրորդ անգամ ըլլալով պատիւրակ մը ճամբայ հանուեցաւ Կ. Պոլսէն, Յարութիւն փաշայի եղբօրորդին Տրդատ պէյ, որ 1897 հոկտեմբեր 26-ին հասաւ ծընէվ նախկին առաջարկն ընելու, նախկին հաւաստիքները նորոգելու։

Խմբագրութիւնը կրկնելով նոյն պատասխանը որ տարի մը առաջ արդէն տուած էր Տիրան պէյին, իր զարմանքը յայտնեց որ թիւրք կառավարութիւնը կը համարձակի տակաւին Դաշնակցութենէն խնդրել որ իր գործունէութիւնը կասեցնէ, մինչդեռ ո՛չ միայն Տիրան պէյին „ինն ամսեան“ մէջ գործադրելի բարենորոգումները մոռցած էին, այլ հայ տարրին դէմ հալածանքը նաւզելու փոխարէն՝ օրօրի կը բազմապատկէր։

Խմբագրութեան այս պատասխանն ստանալէն քանի մը շաբաթ ետք՝ Տրդատ պէյ դարձեալ դիմեց անոր, և ծանրանալով բարենորոգումներու մասին Յարութիւն փաշային սուլթանէն ստացած նոր հաւաստիքներուն կարևորութեանը վրայ, իր կողմէն առաջարկեց անոր չափաւոր բարենորոգումներու ծրագիր մը մշակել ու յանձնել իրեն, որը կը յուսար Յարութիւն փաշայի միջոցով ընդունել և գործադրութեան դնել տալ, գործով ապացուցանելու համար այդ նոր խոստումներուն լրջութիւնը։

Խմբագրութիւնը գիտել տուաւ անոր թէ այդ բարի դիտաւորութիւններուն լրջութեան ապացոյցը կրնար տալ սուլթանը եթէ սկսէր իրագործել հազար անգամ իր խոստացած բարենորոգումները։ Եւ ի՞նչ հարկ կը մնար յեղափոխական կուսակցութենէ մը բխած առաջարկներուն, քանի որ սուլթանն ու Յարութիւն փաշան շատ լաւ գիտեն հայ ժողովրդին արդար պահանջները, որ քանի քանի անգամներ ներկայացուած են թիւրք կառավարութեան՝ պատրիարքարանին, դեսպաններու և յեղափոխականներու կողմէն։ Եւ վերջապէս Խմբագրութիւնը ո՛չ մէկ իրաւունք ունէր որ և է գոհացում տալու այդ կարգի առաջարկի մը, որ Դաշնակցութեան բոլոր կոմիտէներուն ձեռնհասութեանը ենթարկելի գործ մը ըլլալուն, կրնար լուծում մը ստանալ անոնց ընդհանուր համաձայնութեամբը միայն։ Բայց անգամ մը ընդմիշտ վերջ դնելու համար Պոլսէն ծընէվ այդ երթևեկներուն, շատ-շատ կրնար միջնորդի դեր կատարել եթէ Յարութիւն փաշան ուզենար իր առաջարկը պաշտօնապէս ու գրաւոր ներկայացնել կոմիտէներուն։ Իսկ գալով Խմբագրութեան՝ իր կողմէն կը յանձնարարէր միայն արդէն հրատարակուած վաւերագրեր, օրինակ՝ Դաշնակցութեան Ծրագիրը և Կ. Պոլսի Կեդր. Կոմիտէի 1896 օգոստոս $^{14}/_{26}$ թուակիր Յայտարարագիրը։

Այդ պատասխանն ստանալով Տրդատ պէյ մեկնեցաւ Պոլիս և շատ չանցած Խմբագրութիւնն ստացաւ անոր մէկ նամակը 23 դեկտեմբեր թուակիր, ուր յայտնելով թէ „լաւ մը“ բացատրած է Յարութիւն փաշային՝ Դաշնակցութեան „կազմակերպութիւնն ու նպատակները“, ներփակ կը խրկէր Յարութիւն փաշայի՝ կողմէն իրեն ուղղուած, բայց Դաշնակցութեան հասցնելու յատկացուած նամակ մը, որուն ահա էական մասը.

Sublime Porte

*Ministère des Affaires Etrangères.*
Cabinet du Sous-Secrétaire d'Etat.

23 դեկտ. (հայոց) 1897

*Սիրելի եղբօրորդիս Տրդատ պէյ,*

*Այս անգամ 'ի ծընէվ, իմ կողմանէս Դրօշակեանց հետ ըրած տեսութիւններդ եւ նոցա ըրած առաջարկներն քեզմէ լաւ մը հասկցայ. ինչպէս որ գիտես արդէն ազգային Կեդրոնական Վարչութեան հետ խորհրդակցելով մի քանի բարեկարգութեան առաջարկութիւններ ըրինք ուր որ անկ է եւ յոյս մեծ ունիմ որ հետզհետէ Վեհափառ Կայսեր իրատէները պիտի ստանամք եւ մէկ քանի կէտերուն իսկոյն գործադրութիւնը կատարուին։*

*Բու մէջոցաւդ Դրօշակեանց առաջարկութիւնները ընդունած եւ պէտք եղած տեղը ըստ պատշաճի խօսած ըլլալով որոշած եմ իրենց մօտ անմիջապէս մէկը խրկել, որով թէ իրենց ազգիս վերաբերեալ առաջարկներն ու տեղեկութիւնները գրաւոր ընդունի եւ թէ իմ տալիք պատասխաններս գրաւոր յայտնէ եւ այսպէս կարծեաց փոխանակութիւնք կատարուելով հայ ազգիս սրբազան շահերը վերապահելու ամեն ոք իւր ջանքը չի զլանայ։*

*Ամեն ազգայնի պարտաւորութիւն եղածին պէս իմ ալ մինչեւ ցարդ 'ի նպաստ սիրելի ազգիս տուած աշխատութեանցս արդիւնքը Աստուծով քիչ օրէն*

յայտնի պիտի ըլլան գործադրութեամբ նորա բարելաւութեանն պէտք եղած միջոցներովը, եւ որով քաշուած նեղութիւններն հետզհետէ պիտի անհետանան։ Յիշեալ կէտերը մեր Վեհափառ Ինքնակալին համարձակօրէն խնդրած եւ նոցա գործադրութեանը մասին խոստում առած ըլլալով դոցա իրատէն ելածին պէս ամէն մէկը մանրամասնօրէն պիտի բացատրել տամ քօմիթէին։

Մնամ բարեացակամ հօրեղբայրդ

(Ստորագրած) ՑԱՐՈՒԹԻՒՆ Դ. ՏԱՏԵԱՆ

Դաշնակցութեան կողմէն „գրաւոր առաջարկներ“ առնելու համար այդ դիմումը անտեղի էր այն բոլոր մեկին ու որոշ յայտարարութիւններէն ետք որ Խմբագրութիւնն այլ և այլ անգամներ ըրած էր երեք պատւիրակներուն ալ։ Բայց քանի որ պաշտօնական, գրաւոր առաջարկ մը կըստանար Դաշնակցութեան անունին՝ Խմբագրութիւնը փութաց անոր պատճէնն ու Տրդատ պէյի հետ ունեցած իր բացատրութիւններուն ամփոփումը Դաշնակցութեան կոմիտէներուն նկատառութեանը ներկայացնել 14 յունուար 1898 իր շրջաբերականովը։

Միւս կողմէն Խմբագրութիւնը խորհելով թէ այն պարագային՝ երբ Դաշնակցութիւնը համաձայնէր գրաւոր առաջարկներ դնել թիւրք կառավարութեան, պիտի փափագէր այդ քայլն ընել յեղափոխական միւս կուսակցութիւններու և ձեռնհաս անձերու հետ համախորհուրդ, 20 փետրուար 1898 նամակով մը դիմեց Ցարութիւն փաշային, խնդրելով իմացնել թէ կրնա՞ր ինքը արտօնել Դաշնակցութիւնը յայտնել վերև յիշուած մարմիններուն և անձերուն՝ թէ սուլթանի այդ դիմումները անոր՝ Ցարութիւն փաշային միջոցով կատարուած են, և թէ Դաշնակցութիւնը գրաւոր հաւաստիքն ստացած է անկէ այդ դիմումներուն առթիւ *)։

Իր այդ նամակին պատասխանը Խմբագրութիւնն ըստացաւ մարտ 12-ին միայն, Տրդատ պէյի միջոցով, որ երկու օր առաջ հասած էր Պոլսէն, Ցարութիւն փաշային առաջին գրութեան մէջ յիշատակուած պաշտօնը վարելու Դաշնակցութեան մօտ։

Ահա այդ պատասխանին կարևոր կէտերը.

Sublime Porte 16\28 փետր. 1898

*Ministère des Affaires Etrangères.*
Cabinet du Sous-Secrétaire d'Etat.

*Սիրելիդ իմ Տրդատ պէյ,*

*Այժմ մեր Դրօշակեան ազգայինք բնականապէս կրնան հաղորդել ուր որ անկ է թէ ես յիշեալ երկու կէտերուն համեմատ կը յայտնեմ որ դիմումներն իմ միջոցաւս եղած են եւ թէ տուած ապահովութիւնքս լրջութենէ զերծ չ'են։*

*Յիշելով ապա քանի մը իրատէներ, որոնց կարեւորները մինչեւ այսօր դեռ կըսպասեն իրենց գործադրումին, Ցարութիւն փաշան կը յարէ.*

*Այժմ այս եղածներն անմիջապէս հաղորդէ՛ մեր հայրենակցաց եւ միանգամայն ինչպէս որ արդէն ըսած եմ, անոնցմէ մասնաւոր կերպով խնդրէ՛ որպէսզի իրենք ալ Անատոլուի մէջ բնակող ճիւղերնուն եւ խղթակիցներնուն իրատէն որ գործադրութեանց վրայ տեղեկութիւն տան Ժընէվի քօմիթէյին թէ յիշեալ իրատէներն կը գործադրուին թէ ո՞չ, այնպէս որ քօմիթէն ալ անմիջապէս սոյն տեղեկութիւններն քեզ հաղորդէ եւ դու ալ ինձ իմաց տաս պէտք եղած եղրակացութիւններն ձեռք բերելու համար։ Բնական է որ այսուհետեւ ալ ստանալիք իրատէները հարկաւ պիտի հաղորդեմ՛ի տեղեկութիւն քօմիթէյին եւ՛ի բանակցութիւն։*

*Մնամ միշտ բարեացակամ հօրեղբայրդ*

*(Ստորագրած)* ՑԱՐՈՒԹԻՒՆ . ՏԱՏԵԱՆ

Խմբագրութիւնն իր պատւիրակներուն միջոցով անմիջապէս յայտնել տուաւ Տրդատ պէյին, թէ աւելորդ և անտեղի կը նկատէ անոր վերագրածը, քանի որ Դաշնակցութեան պատասխանը տակաւին իրեն՝ Խմբագրութեան ծանօթ չըլլալուն, ինքը չէր կրնար ճանչնալ անոր այդ նոր պաշտօնը և պաշտօնական յարաբերութեան մտնել անոր հետ։

Տրդատ պէյ արդարացի գտնելով Խմբագրութեան այդ դիտողութիւնը, պատասխանեց թէ ինքը կըսպասէր ուրեմն Դաշնակցութեան պատասխանին, իսկ մինչև անոր ստացուիլը անպաշտօն կերպով գիտակ կը պահէր Խմբագրութիւնը հետզհետէ ստացուելիք „շնորհներուն“ և կատարուելիք բարենորոգումներուն։

Եւ արդարև Տրդատ պէյ ութ ամսէն աւելի մնաց Ժընէվ, Խմբագրութեան անդադար հաղորդելով Ցարութիւն փաշայէն իր ստացած բազմաթիւ նամակներուն պատճէնները, ուր խոստումներն ու հաւաստիքները կը վխտան միշտ և ուր իբրև կարևոր „շնորհներ“ կը ծանուցուէին Ազգային հիւանդանոցին օրական նպաստ տրուած հացն ու միսին քանակութեան քանի մը օխա աւելցուիլը, 25 հայ երիտասարդներու պետական վարժարաններ ընդունուիլը և նման բաներ. աւելորդ է ըսել թէ մեր հասկցած բարենորոգումներու ձայնն ու ձունը չկայ հոն։

Մինչ այս մինչ այն՝ Դաշնակցութեան բոլոր կոմիտէներն ալ միաձայն կարծիք յայտնեցին՝ կարևորութենէ զուրկ համարելով, նկատառութեան չառնել Ցարութիւն փաշա Տատեանի միջոցով սուլթանին ըրած այդ դիմումը Դաշնակցութեան մօտ և, որովհետև քիչ օրէն՝ ապրիլի երկրորդ կէսին, պիտի գումարուէր Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, այդ որոշումը ենթարկել անոր վաւերացումին։

*(Շարունակելի)*

*) Ընդհանուր ժողովը թիւրք կառավարութեան առաջարկը մերժելուն, այդ մտադրութիւնն ալ մնաց չիրագործուած։

# ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Ամերիկեան „Eagle“, „Tribune“ և „Telegram“ թերթերում վերջերս լոյս տեսան մի շարք նպաստաւոր յօդուածներ հայկական շարժումի մասին։ Բացի այն յօդուածներից, որոնք տպագրուեցին վերոյիշեալ լրագրերում, դոցանից „Eagle“ և „Tribune“-ը իրենց խմբագրականներում սաստիկ յարձակւում են սուլթանի և նրա կառավարութեան վրայ, իսկ „Telegram“-ը մի առանձին ցասումով նոյն իսկ աւելացնում է.

„Եթէ հայերը սուլթանի բռնապետական լուծը խաղաղօրէն եւ լուռ տանէին, այդ պիտի ցոյց տար միայն, որ նրանց չափ ստոր ոչ մի ուրիշ ազգ չկայ աշխարհումս. . .“

* * *

Պարիզի „Journal du Peuple“ իր ապրիլ 8-ի համարին մէջ արտատպելով Դաշնակցութեան վերջին Ցայտարարագիրը վեց մեծ պետութիւններուն, հետևեալ խորհրդածութիւնը կը կցէ անոր.

«Օսմանեան խժդժութեան զոհերը եթէ կրսպասեն, որ պետութիւններու բարեհաճութիւնը արտայայտի ինչպէս իրենց՝ երկա՞ր պիտի սպասեն։ Եթէ կ՚ուզեն հարստահարութենէ ազատիլ, իրենք իրենց թող գործեն»։

Իտալական „Avanti“ լրագիրն ալ իր 16 ապրիլի համարին մէջ „ցաւագին պատրանք մը“ կ՚անուանէ հայկականին պէս „արդար և մարդասիրական խնդրի մը“ լուծումը եւրոպական դիւանագիտութենէն ակնկալելը։

* * *

„Դրօշակ“-ի № 2-ում՝ „Թիւրքիոյ շուրջը“ բաժնի մէջ՝ մենք ծանօթացրինք ընթերցողին գերմանացի պաստօր Նաումանի կարծիքների հետ հայերի մասին։ Այս անգամ բերում ենք այստեղ նոյնպէս գերմանացի և նոյնպէս պաստօր Brokes-ի կարծիքը նոյն խնդրի առթիւ։

Զանազանութիւնը այդ երկու պաստօրների մէջ այն է, որ Նաումանը սուլթանասէր վիլհելմի հետ էր ճանապարհորդում Թիւրքիայում՝ նրա համար աղօթելու պաշտօնով և իր ծանօթութիւնը հայերի մասին առել էր Պոլսում ապրող մի ինչ որ գերմանացի բրուտից, իսկ Brokes հայ սովեալներին օգնելու նպատակով էր Թիւրքիա գնացել Կիլիկիայի խորքերը մտել ու անձամբ տեսել ծանօթացել ժողովրդին։

„Մեզ մօտ եկան այցելուներ, որոնցից մի քանիսը մասնակցել էին երեք տարի առաջ եղած ապստամբութեան։ Հպարտ, առանց գլուխները կորացնելու՝ ներս մտան նրանք եւ նստան լռիկ. խայտաճամուկ եւ ոսկեհուռ զգեստներ ունէին նրանք հագին, տարճանակներ ու դաշոյններ գօտիներին կապած... Քիչ յետոյ միայն նրանք հարցրին ինձ, չի՞ կարելի արդեօք, որ զէյթունցիք դաշնակից դառնան Գերմանիային, որպէսզի այդ կերպ ապահովութիւն գտնեն... Ապա եկան ուրիշները, որոնք ծախել էին ուզում Զէյթունի բնորոշ զէնքեր ու զարդեր։ Պաստօր Լօմանը խնդրել էր ինձ՝ գնել նրանցից։ Իմ առջեւ տեսնում էի խոշոր, յաղթանդամ մարդիկ, մեծ բեխերով եւ տարճանակների, սրերի ու հրացանների մի կոյտով։ Մէկը նրանցից, որը առանձնապէս նշանաւոր էր դարձել պատերազմի մէջ, յանկարծակի իր յիշողութիւններով զբաւած՝ նետեց վերեւի զգեստը եւ հագնելով, ինչպէս կուի ժամանակ՝ սկսեց մի տեսակ պատերազմական պար։ Որքա՞ն այս հայերը տարբեր են Կ. Պոլսի հայերից. սա մի բոլորովին ուրիշ ժողովուրդ է։ Եւ որքա՞ն անիրաւացի է դատել ամբողջ ազգի մասին հիմնուած այն բոլորի վրայ, ինչ որ տեսնում են Բոսֆորի ափերին։ Զէյ՞նք ծիծաղիլ արդեօք մի օտարականի վրայ, եթէ նա Բերլին եկած միջոցին՝ դատէր բոլոր գերմանացիներին՝ զինուորական, ազնուական, թէ գիւղացի, Ֆրիդրիխշտրասսէի մագազինների մի քանի գրագիրների համեմատ։ Այդպէս են անում Կ. Պոլսի գերմանացիք հայերի վերաբերմամբ եւ նրանք այդ տեսակէտը տարածել են ամբողջ Գերմանիայում։ Պոլսում քիչ յատ ապրողը գիտէ արդէն որ առեւտրական մրցումի ոգին մատ ունի այդ տեսակէտի մէջ“։

---

# ՊԱՏԻՒԸ

(ԽՄԲԱՊԵՏ ՄԻՔՕՅԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ *)

—

Շատախը ցնցւած էր։ Լեռնէ լեռ, ձորէ ձոր Միքօյի անունն էր հնչում։ Նա իր ընկերներով բուն էր դրել ժայռոտ բարձունքների վրայ և իր սարսափը սփռել ամէն տեղ։ Թշնամիների համար դա մի առիւծ էր, որ յանկարծ դուրս էր պրծել երկաթեայ վանդակից և իր կրած ստրկութեան վրէժն էր պահանջում։ Խաղաղութիւնը վրդովւած էր Շատախում. քիւրդ ու թիւրք դողում էին. հայ գիւղերի պատուհաս Շաքիրը իր սեփական բնակարանի մէջ սոսկում էր նրա անունից և իվերջոյ ճարը կտրած՝ գլուխն առնում կորչում։ Հայերն օրհնում էին քաջին, աղօթում նրա կեանքի համար, բայց քիչ չէին և այնպիսիները, որոնք անէծք էին թափում իրանց բարերարի գլխին. հիւանդ երեխան ե՞րբ չի անիծել բժշկին. ստրկական անզգայութիւնը հանգըստի, խաղաղութեան սիրահար է. քո՛ւն, միայն քո՛ւն — ի՞նչ փոյթ, որ այդ քունը մահաբեր է։ Բայց ոչ ոք այնպէս չէր անիծում Միքօյին, ինչպէս Ք. . . եցի Հայրօն։

Հայրօն չափազանց գոհ էր իր վիճակից. գոռում երկու լուծ հաստավիզ եզներ և մի քանի կթան, դաշտում լաւ վարելահողեր, որ իր ձեռքով մշակում էր։ Ինքն էր, իր քոյրը և ծերունի հայրն ու մայրը — խաղաղ, սիրով ապրում էին։ Ճշմարիտ է, վարուցանքի կիսից աւելին քրդերն էին տանում, շատ էր աշխատում՝ քիչ վայելում, բայց էլի մնացածը բաւական էր մի կերպ ապրելու համար — էլ ի՞նչ հոգս. . . Ասում էին, որ քրդերը հայ աղջիկ են փախցրել, որ զափթիէները հարեւանի տանը գիշերել և վիրաւորել են կնոջ պատիւը, որ ռէսի հարսին համբուրել է բեգը և այլն և այլն։ Բայց այդ բոլորը Հայրօյին շատ քիչ էր հետաքրքրում. իրենք դեռ խաղաղ էին, նազօյին ոչ ոք մինչև այժմ չէր ասել, թէ աչքիդ վերևը յօնք կայ — էլ ի՞նչ դարդ, ի՞նչ հոգս. ո՞վ է մեղաւոր, որ ուրիշները լաւ չեն նայում իրենց ընտանիքին. զափթիէն տուն եկաւ՝ թող ընտանիքը գիշերը տանից հեռացնեն. իհարկէ, որ տանը մնան, զափթիէն էլ վատութիւն կ՚անի, բեգն էլ կը համբուրի. դէ՛ նրանք անօրէն են, անօրէնն էդպէս կը լինի։ Այսպէս էր մտածում Հայրօն, և խիղճը հանգիստ էր։ Ամէն առաւօտ, խարազանն ուսին, եզներն առաջն արած՝ դաշտ էր գնում, և երեկոյեան՝ քթի տակ երգ մռմռալով՝ վերադառնում։ Հայրօն էլ ի՞նչպէս չանիծէր, չատէր Միքօյին, որ իր յանդուգն շահատակութիւններով իրար էր տալիս քրդերին, զափթիէներին. նոյնիսկ ձայն կար, թէ գիւղում պիտի պահականոց էլ շինուի։ Պահականոցը շինուեց հէնց այն աղբիւրի մօտ, որից Ք. . . գիւղի աղջիկները ջուր էին տանում։ Եւ Հայրօն ատում էր Միքօյին ու իր ընկերներին։ Սակայն մի դէպք այդ ատելութեան զգացմունքը էլ աւելի զօրացրեց։

Աշուն էր։ Գիւղից շատ հեռու, մի ամայի ձորակի մէջ, Հայրօն ակօսում էր իր վերջին վարելահողը։

—Բարի՞ աջողում, Հայրո՛։ Նա յետ դարձաւ նայեց. Միքօն էր իր խմբով։

— Աստծու բարին, պատասխանեց Հայրօն դժկամակութեամբ։

---

*) Տես „Դրօշակ“ 1899 № 3, եր. 39։

— Էդ ի՞նչ ես անում, Հայրո։

— Վար եմ անում, չե՞ս տեսնում։

— Ինչի՞ համար է այդ վարը։

Հարցը տարօրինակ էր. Հայրօն պատասխանի փոխարէն՝ երկար նայեց Միքօյին, ապա մռմռաց.

— Ինչի՞ համար է. կ'ասես ինքը չի հասկանում, որ տուն ու տեղն տէր ենք, հացի հոգս պիտի քաշենք։

— Հա՛ց ես աշխատում հա՛ — ասաց խօսակիցը հեգնութեամբ — լաւ ես անում, Հայրո, լաւ ես անում։ Բայց որ այդքան աշխատում ես, քիւրդ ու թիւրքը քեզ հաց թողնո՞ւմ են. տանդ հաց կա՞յ այժմ։

— Ապա չկա՞յ...

— Շատ ուրախ եմ, որ կայ։ Թէ որ այդպէս է, հարևան ջա՛ն, տեսնում ես, սար ու ձոր ընկած մարդիկ ենք, գեղերն էլ մտնել չենք կարող. մենք եզներդ կը պահենք, դու վազէվազ գեղ գնա՛, մի քիչ հաց բեր մեզ, հարևան ենք, հայ քրիստոնեայ ենք։ Ամբողջ մի օր է, որ բան չենք կերել։

Էդ էր պակաս. Հայրօն գնայ ֆիդայիների, զաչաղների համար հաց բերի... Նա փորձեց գլուխը ազատել յոգնածութիւնը, գիւղի հեռաւորութիւնը պատճառաբանելով, բայց իզո՛ւր. Միքօն վերջիվերջոյ պահանջող, հրամայող, անողորմ հրամայող դարձաւ։

Ճար չկար.

— Աստուած ձեր գործին երբեք յաջողութիւն չտայ, մռմռաց Հայրօն և եզները թողնելով՝ դէպի գիւղ գնաց։

Պահականոցի առջևից անցնելիս՝ նա մի կանգ առաւ։ Նրա գլխով մի զարհուրելի միտք անցաւ — չմտնե՞լ արդեօք օնբաշիին պատմել բոլորը և միանգամից ազատուել այդ դև Միքօյից։ Նա նոյնիսկ մի քանի քայլ արեց դէպի պահականոցը, բայց հէնց այդ բոպէին հրտեղից որտեղ՝ մի հատիկ անուն յիշեց, միակը, որ նա ո՞վ գիտէ երբ լսել էր ժամում, Ցուդա՜... Նա կանգ առաւ, շրթունքները մի քանի անգամ ինքնաբերաբար հնչեցին՝ „Ցուդա՜“... „Ցուդա՜“... Նա լսում էր այդ անունը, և նրան նոյնիսկ թւում էր, թէ ինքը չէ ասողը, այլ մի ուրիշ խորհրդաւոր անձ նրան կանչում է՝ „Ցուդա՜“... „Ցուդա՜“... Հայրօն արագութեամբ անցաւ պահականոցի առաջից, նա մինչև անգամ մի փոքր էլ վազեց... Նա փախչում էր գայթակղութիւնից...

Եւ Միքօն ստացաւ հացի պաշարը։ Բայց այս ծանր փորձութիւնը կրկնապատկեց Հայրօյի ատելութիւնը։ Նա կ'ուզէր, որ Միքօյին բռնեն, սպանեն, քերթեն, անյայտացնեն, բայց ինքը մաս չունենայ այդ բանում։ Նա ոճրից վախենում էր։

Էլի օրեր անցան։

Հայրօն նորից ընկաւ իր սովորական աշխատութիւնների յետևից, նոյնիսկ մոռացաւ էլ Միքօյին...

Աշնանային մռայլ, ամպամած երեկոյ էր, երբ Հայրօն տուն էր դառնում դաշտից, դանդաղ ու անհոգ, ինչպէս այն զոյգ եզները, որոնք ականջները կախ ձըգած օրօրուելով առաջ էին շարժւում։ Եզները որոճում էին, Հայրօն էլ երգ էր մռմռում։ Պահականոցի առաջ նա կանգ առաւ քարացած։ Նրա ականջին մի այնպիսի կանացի ձայն հասաւ, մի այնպիսի ճիչ, որ նա մինչև իր ոսկորների ծուծը դողաց... Անասուններն անգամ իրենց ականջները խլշեցին այդ ձայնից, Հայրօն ի՞նչպէս չդողար... Ներսում մի ոճիր էր կատարւում...

Զոհը կին էր, աղբիւրի մօտ երևում էր մի սափոր։ Հայրօն ուզեց նորէն փախչել — ուրիշ ի՞նչ անէր. ներս մտնե՞լ օգնութիւն աղաղակել, ո՞վ, Հայրօ՞ն... Բայց նրա ի՞նչ բանն է խառնուել ուրիշի գործին. ո՞վ գիտէ, ում աղջիկն է, — և նա մի քայլ ձգեց, սակայն երկրորդ քայլն անել անկարող էր... Հայրօն զգաց, որ ինքն անկարող է հեռանալ այդտեղից, ասես թէ նրան մեխեցին պահականոցի առաջ... Զարհուրելի չարիքի հանդէպ զարթած առաքինութեան հզօր ձայնն էր, որ նրան դիւթեց, կաշկանդեց իր տեղում հակառակ իր կամքի։

Մէկ էլ յարկարծ՝ զափթիէների ձեռքից պոկուելով՝ դուրս փախաւ մի կին սրտաճմլիկ ճիչով և Հայրօյին փաթաթուեց.

— Ամա՛ն ախպէր, ազատի՛ր ինձ...

Նազո՞ն էր...

Ամպերը որոտացին, կայծակը ճայթեց, Հայրօյի աչքերը մթնեց... Նրան թւում էր, թէ տիեզերքը կործանւում է, աշխարհը վերջ է առնում... Նա ինքն էլ չգիտէր, թէ ուշաթափ քրոջն ինչպէս տուն հասցրեց։ Յետոյ խարազանը դէն շպրտեց, տան մի անկիւնը քաշուեց և կատաղութիւնից լաց եղաւ, երկա՛ր, երկա՛ր... Վաղուց նա լաց չէր եղել։ Արցունքի խոշոր կաթիլները թափւում էին ամէնքի համար, բոլոր վիրաւորուած, անպատիւ եղած հայ կանանց ու աղջիկների համար, որոնց ցաւն այժմ միայն զգաց նա։

Արդէն գիշեր եր, երբ նա կանգնեց, սրբեց աչքերը, տան մի անկիւնից վերցրեց երկար կօպալը (ձեռնափայտ)... Հայրը հասկացաւ, որ Հայրօն հեռու տեղ է գնալու։

— Ո՞ւր կ'երթաս լա՛ւ, քե՛ մեռնիմ, դուրսը մութ ճռիկ, երկիրը չար, երկինքը սև, չորս կողմներս կուփարնի ծով, էս բէխեր սհաթին ո՞ւր կ'երթաս, Հայրո ջա՛ն։

— Չեմ կարող, հա՛յր, էլ չեմ կարող... Ես տեսայ, էս կոյր աչքերս տեսան, չեմ կարող տանել, ես պէտք է երթամ... Անձրևն է գալիս, աւելի լաւ. թող գայ, թող կարկուտ էլ գայ. թող քարեր, պէտ պէտ քարեր թափուին երկնքից էս գլխս... Օ՜, ես անիծում էի Միքօյին, ես անիծեցի նրա գործը, և իմ շրթունքները չայրուեցի՜ն, և ես չպապանձուեցի. ինչո՞ւ Աստուած։ Թէ Միքօյի գործն անիծուած է, ո՞րն է օրհնուած, իմը՞... որ դատեմ՝ քրդե՞րն ուտեն, քոյր պահեմ՝ որ զափթիէ՞ն տանի... Հո՛, թաղեմ էս գլուխը... Դեռ գդակ էլ ունի՞մ... Հայրօին գդա՜կ... Ինչո՞ւ, ի՞նչ իրաւունքով... Դէ ասա՛, բոլոր կնիկներն էլ պիտի գդակ դնեն էլի՞... Եւ նա խլեց գլխից իր քօլոզը, զարկեց գետնին և դուրս գալով՝ կորաւ խաւարի և անձրևի մէջ... Պէտք էր Միքօյին գտնել։

Երկար ժամանակ նա գնում էր մտքում կրկնելով՝ Միքո՛, Միքո՛. երբեմն վազում էլ էր։ Անձրևը ծեծում էր նրան, քամին խառնում նրա մազերը, խճճում գլխին, և նա շարունակում էր վազել անընդհատ, ինչպէս մի զայրացած գիշերային ոգի, որ փնտռում էր իր զոհին, կամ ինչպէս մի մեռելի ուրուական, որին մօր անէծքը հալածել էր իր գերեզմանից՝ այդ զարհուրելի ժամին...

Երկա՛ր գնաց... Դեռ խաւար էր. յոգնած նստեց մի քարի վրայ, մտածեց։ Օ՜, զարհուրելի բաներ էր մտածում... Նա կ'ուզէր այդ ժամին բոց դառնալ, հրդեհել ամբողջ աշխարհը, որպէսզի այն պահականոցն էլ իր

զափթիէներով այրւի մոխիր դառնայ. պէտք էր վրէժ առնել, պէտք էր մահու գնով սրբել քրոջ պատւի անարգանքը... Բայց ի՞նչպէս... Նա նորէն յիշեց Մէքօյին։ Գտնել նրա՞ն... Օրեր ու շաբաթներ թափառեց Հայրօն, գտաւ Մէքօյին և նրա ոտներն ընկաւ.

— Էլ չեմ կարող ապրել, չեմ կարող, խմբապետ. մորթեցէ՛ք, քերթեցէ՛ք ինձ, դիակս շներին ձգեցէ՛ք, ի՞նչ հարկաւոր է այսպիսի կեանքը... Օ՜, ինձ ասում էին, ինձ պատմում էին, բայց ես ուրիշի ցաւը չէի հասկանում, իմ միսը չէին կտրել, իմ սիրտը չէին ծակել, իմ քոյրը չէր պղծւած, ես անզգայ էի։ Ա՞յժմ... այժմ սպանեցէ՛ք ինձ, միայն թէ առէ՛ք նազօյի վրէժը։ Կոտորեցէ՛ք այդ պահակատունը, կոտորեցէ՛ք զափթիէներին, օ՜, կոտորեցէ՛ք բոլոր զափթիէներին, առէ՛ք բոլոր հայ կոյսերի վրէժը...

Եւ նա մռնչում էր ցաւից, տրորում էր, չանգռում էր կուրծքը։ Նա այրւում էր ինչպէս բոցերի մէջ։ Դեռ երբեք անսիրտ ապերախտութիւնն այդ աստիճան անողորմ կերպով չէր պատժւած, երբեք ապաշխարութիւնն աւելի անկեղծ, աւելի դառն չէր եղած։ Եւ Հայրօն հայդուկ դարձաւ։ Նա սեղմեց իր այրւած կրծքին պաղ հրացանը, բայց թախիծը նրանից չհեռացաւ. բոց ունէր ներսում. քրոջ անպատւութիւնը նրան հանգիստ չէր տալիս։ Նրա ամենասուրբ ցանկութիւնն էր տեսնել պահականոցը, այդ աւազակների բոյնը՝ բոցերի մէջ և պահակները խողխողւած, ապա շունչը փչել հանգիստ։ „Խմբապետ, կրկնում էր նա յաճախ, դժոխք ուղարկես կ'երթամ, գլուխս հազար մահու կըտամ, միայն վախենում եմ աչքերս չտեսնեն պահականոցի ջարդը"։

Հասաւ վերջապէս Հայրօյի համար սրբազան վրէժխնդրութեան ժամը։

Ուշ աշուն էր, խաւար գիշեր։ Քա... գիւղը քնեց երկչոտ քնով։ Այն երկրում, ուր Շատախն է, գիւղերը չեն քնում, այլ մռնում են գիշերները վտանգի ահից։ Անքուն էր միայն Նազօն։ Իր անարգանքից և եղբօր անյայտանալուց յետոյ՝ նա քուն չունէր, նա տանջւում էր, նա սպասում էր եղբօրը... Հեռու մի շուն ոռնաց ողբաձայն, տխուր. ապա կաղկանձելով նրան ձայնակցեցին մի քանի ուրիշները. կազմւեց մի չարագուշակ, այլանդակ համերգ — միակ նշանը, թէ գիւղում բնակիչներ կան։ Ցանկարծ մի հրացանի տրաքոց, գիւղը էլ աւելի կծկւեց, ոչ մի դուռ չճռնչաց... Նորէն հրացանի պայթիւն և ապա՝ մի անընդհատ միահամուռ գոռոց գնդակների...

Նազօն կամացուկ նստեց անկողնի մէջ։ Նա ականջ էր դնում... Հրացանների գոռոցի մէջ նաև մարդկային ձայներ էին լսւում ուղիղ պահակատան կողմից։ Նազօն ցնցւեց։ Նրան յանկարծ թւաց, որ այդ բոլորն իր անձի հետ ինչ որ կապ ունի։ Մի ներքին ձայն նրան ասում էր, որ ինքն է այդ ահաւոր հրացանաձգութեան, այդ աղմուկների պատճառը, որ անպատւութեան վրէժն է լուծւում, որ այնտեղ է Հայրօն...

Նա կամացուկ շորերը հագաւ, վեր կացաւ, դուռը բացեց զգուշութեամբ և բարձրացաւ խրճիթի կտուրը։ Տեսարանն ահաւոր էր... Ամբողջ գիւղը լուսաւորւած էր. պահականոցը վառւում էր բոցերի մէջ և այդ հրդեհի շուրջը կատաղի կռիւ էր մղւում, հրացանները ճայթում էին անընդհատ։ Նազօյի յուզւած կուրծքը բարձր ու ցածր էր լինում... Նա և՛ սարսափում՝ էր այդ կատաղի որոտներից, և՛ հաճոյքով էր դիտում հրդեհի բոցերը։ Օ՜, սրբազան բոցեր, որոնք լիզում, մաքրում էին նրա պատւի վրայի կեղտն ու արատը։ Այն միտքը, թէ իր եղբայրն այնտեղ է, այդ կռւի մէջ է, գուցէ այդ բոցերի մէջ, գուցէ վերաւոր, նրան մի անօրինակ քաջութիւն ներշնչեց. նա համարեա անյաղթելի պահանջ զգաց այնտեղ լինել այդ բոցերի մօտ, իր եղբօր մօտ, մտիկից տեսնել իր դահիճների կոտորածը, լսել նրանց ժահմերձ հոնգիւնները, նրանց հառաչանքն ու ճիչը, տեսնել իր եղբօրը և նրա ընկերներին իրենց սրբազան զայրոյթի, սրբազան ոգևորութեան մէջ...

Եւ ահա նա ցած իջաւ կտրից և ողոր մոլոր փողոցներով դէպի պահականոցը վազեց։ Մինչ այդ՝ պահականոցի ջարդը շարունակւում էր։ Զինւորներից ոմանք ոռնում էին բոցերի մէջ խորովւելով, ուրիշները դուրս գալ փորձելով՝ ընկնում էին հայդուկների գընդակներից, ոմանք գլուխները կորցրած խելագարի պէս դէսուդէն էին վազում։ Կատաղի, անգութ էր մանաւանդ մի հայդուկ, մի թիկնաւէտ, բարձրահասակ գեղջուկ, որի գլուխը փաթաթւած էր միայն մի լաթի կտորով։ Խմբապետը՝ Մէքօն՝ որոտագին հրամաններ էր արձակում։ Բոցերով լուսաւորւած այդ զայրացկոտ դէմքերը զարհուրելի էին։ Մէկ էլ յանկարծ բոցերի միջից մի վերջին գնդակ թռաւ. գլուխը թաշկինակով ծածկած մարդը երերաց, գունատւեց։ Հէնց այդ րոպէին Նազօն գրկեց Նրան.

— Վա՜խ, քոռանամ ես, Հայրօ ջան...

Եղբայրը քնքուշութեամբ փարեց քրոջ վզին և համբուրեց Նրան... Հայրօն գունատ էր, շրթունքները դողդողում էին. նա կամաց կամաց իր ամբողջ մարմնով ծանրացաւ քրոջ ուսին։ Կրծքի վէրքից հոսում էր արիւնը։ Քոյրը սղմեց ձեռքը վէրքի վրայ և կրկին ու կրկին համբուրեց եղբօր գունատ ճակատը... Հայրօն աւելի և աւելի կախւեց, ծանրացաւ քրոջ ուսին և նա հազիւ կարողացաւ թոթովել.

— Նազօ ջան, հիմա կարող ես իմ դդակը գլխիս դնել...

Վրէժխնդրութեան բոցերը լուսաւորում էին պատւի նահատակի գունատ դէմքը։ Նա մեռնում էր, բայց քրոջ անարգանքը սրբւած էր...

ՂԱՐԻԲ

---

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

1898 թւին տեղի ունեցած Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի վճռին համաձայն, „Դրօշակ"-ի խմբագրութիւնը ապրիլի 15-ից սկսել է հրատարակել մի Ցաւելւած, որ վերաբերում է Նոր հնչակեան կուսակցութեան և Դաշնակցութեան միջև ծագած միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրին։ Ցաւելւածը տպագրւում է սակաւաթիւ օրինակներով և բաշխւում է՝ կոմիտէների միջոցով՝ այդ խնդրով հետաքրքրւողներին միայն։

*

*Տեղի սղութեան պատճառով Ռիբատութեան ցանկը կը հրատարակւի յաջորդ համարում։*

---

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)